

Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ Բ.— ՇՐՋԱՆ Ժ· ՏԱՐԻ Թ·—ՓԵՏՐՎԱՐ ՀԸ·

ԿՐՕՆԱԿԱՆ

Ի ՍԱՑՔԵՆԻ ԵԿԵՂԵՑԻՔ

Անցեալ տարւոյ մէջ Ի. Գ. Պօլիս Պատրիարքարան մերաղնեաներէն մի քանի նշանաւոր անձանց ընդ ընտանեացն ներքին համոզմամբ եւ գիտակցաբար ի Ծոց Հայաստանեայց մայրենի Եկեղեցւոյ վերադառնալը անշուշտ կյիշեն մեր սիրելի եղբարք։

Ինչպէս Արարատ ամսագրոյս նախընթաց թիւերուն հրատարակուեցաւ, կյիշեն նոյնպէս՝ զի այս օրերուն Նիկոմիդիայ Հայոց վիճակին ի Պարտիզակ գեղջ բնակեալ քառասուն եւ հինգ ընտանիք եւս՝ իւրեանց քարոզչի հետ վերադարձան ի Ծոց մայրենի Եկեղեցւոյ՝ յորմէ ոչ բաղում ժամանակէ հեռացած էին եւ ի Ծոց պապականութեան ապաստանած։

Մեր վնասուածը այն չէ՝ որ Պապական մերաղնեաներէն ոմանք հեռզհետէ գիտակցաբար կամ անգիտակցաբար կվերադառնան ի Ծոց մայրենի Եկեղեցւոյ՝ եւ ոչ սորա համար աւելի կմխիթարուինք, այլ այս է եւ գլխաւորապէս այս տեսութեամբ կսփոփուինք՝ զի օտարաց բազմակուլ թակարդներուն խայտառ կորտուեան մօտեցած մեր եղբարք սթափած են, եւ պարզապէս տեսնելով իւրեանց գտնուած վտանգին անխուսափելի դառը հետեւանքը՝ կջանան տակաւ առ տակաւ աղատուիլ՝ ինչպէս որ ոմանք արդեամբ կհաւաստեն զայս վերադառնալով ի մայրենի Եկեղեցի՝ ի նոյն խրախուսելով նաեւ միւս կարեկցութեան արժանի եղբարքը։

Բայց արեմք։

Ամենաքէն այն ամեն մերաղնեայք՝ որք վիճակամբ օտար կրօնից կամ աղանդոց ծուղակում որսլուիլ եւ իսկ անձնական

եւ այլապատճառներով խորասուզեալն՝ եւ պատուաստուելով բողոքականութեան կամ պապականութեան եւ կամ այլ կրօնից մէջ՝ նոքա ինչպէս Հայոց Եկեղեցիէն՝ նոյնպէս Հայոց ազգութենէն հերձեալ հեռացած կ'համարուին, հետեւաբար օտարին օտար վարքը մոնելով՝ օտար եկեղեցւոյ կամ մի ազանդոյ մէջ երբ եւ իցէ անշուշտ անհետ պիտի կորնչին։ Վասն զի՝ թէեւ կ'ջանան օտար կրօնի վերայ Հայութեան անունը եւս պատուաստել՝ Հայ — բողոքական, Հայ — Պապադաւան եւլն կոչուելով՝ ջանալով միանգամայն Հայութեան անունը՝ յատկութիւնքը՝ լեզուն՝ գրականութիւնը՝ պատմութիւնը եւլն անկորուստ պահպանել, սակայն այս ջանքը բաւական չ'եւ որքան կարող է յաջողութիւն գտանել՝ երբ օտար կրօնից մէջ մտած՝ օտար կրօնի պաշտօնեաներն եւ ուղղութենէն կրթեալ եւ պատրաստեալ կրօնական պաշտօնեաներով շրջապատեալ կ'կառավարուին եւ նոցա ազգեցութեան ներքեւ սահմանափակ կ'նան։ Մանաւանդ օտար կամ օտարէն պատուաստեալ պաշտօնէութիւնն եւ օտար զօրաւոր ազդեցութիւնն երբ կ'վայելէ արտաքին մեծ պաշտպանութիւն եւ պետական նեցուկներ ունի, օտարակրօն բայց սակաւաթիւ Հայոց խմբեակը՝ թէպէ վինի հարիւր՝ կամ երկու եւ կամ երեք հարիւր հազար անձն, կարճ է դիմակալել օտար ազդեցութեան դէմ իւր ազգութիւնը անկորուստ եւ պայծառ պաշտպանել պահպանելոյ համար՝ եւ իսմին որքան կ'յաջողի։

Աւելի պարզ խօսիմք եւ ապացուցանեմք։

Բողոքական Հայոց քանակութիւնը շատ սակաւաթիւ է՝ բայց դնեմք թէ քանակ եւ հինգ հազար մարդ կայ։ Այս քանակ եւ հինգ հազարը եւս գլխաւորապէս Ամերիկական՝ Անգղիական եւ Գերմանական քարոզչաց տարբեր եւ իրերահակառակ քարոզութեանց եւ ազդեցութեանց ներքեւ կ'գտնուի։ — Զեմք յիշեր նոյն իսկ քանակ եւ հինգ հազար Հայոց մէջ եղած բազում երկպառակութիւնքը եւ անհամաձայնութիւնքը ըստ ազանդոյն եւ ըստ ազգային կամ ներքին ինքնակառավարութեանց՝ որ ի միում գեղջ անգամ՝ չորս հինգ եւ աւելի կուսակցութիւն կազմած են եւ միմեանց դէմ զինուած կ'գործեն։ Պոյզն բացատրութիւնը պէտք չէ մոռանամք։ — Արդ այսպիսի վիճակի մէջ եւ օտարին գաստիարակութեամբ պատրաստեալ պաշտօնեաներ ունեցող Հայոց սակաւաքանակ խումբը ինչպէս եւ որպիսի զօրութեամբ պիտի կարողանայ դիմակալել Ամերիկական՝ Անգղիական եւ Գերմանական անհամեմատելի զօրութեանց ներգործութեանց եւ ջանից դէմ իւր ազգութիւնը՝ լեզուն՝ գրականութիւնը եւլն պաշտպանելով պահպանելոյ համար։ Չէ որ արդէն տակաւ խումբերու բաժանեալ՝ եւ իւրեանց պաշտօնեայքը օտարէն խնամած խմորեալ եւ պատրաստեալ լինելով միոյն կամ միւսին երբ եւ իցէ քոլորովին եւ խաղաղ անձնատուր ղեկ պիտի [illegible]։ Այժմ բարեբաղդ են՝ որ տակաւին Հայկական անունը՝

արիւնը եւին, վառ կեցած է ի նոսա, գեռ շատ ժամանակ անցած չէ՝ որ իւրեանց մայրենի եկեղեցիէն հեռացած են, տակաւին իւրեանց բուն ազգակցաց՝ Հայոց մէջ կապրին եւ իւրեանց արենակից եղբայրներէն շրջապատուած են, որք հզօր միջոցներ եւ առիթներ կընծայեն օտարաց մէջ շուտով եւ խափան անհետ կորնչելոյ դէմ, սակայն այս հանգամանքները եւս շատ երկարատեւ չեն կարող լինել, եւ մի օր օտարաց նպաստակին եւ մոռացութեանց շատ յաջող պատեհութիւնք եւ առիթներ կպատահին՝ իւրեանց բուն նպատակը խափան արդիւնաւորելոյ համար, որում լիներկայս առնել եւս պարզ եւ կենդանի օրինակ թոյղ լինին Հայ - պապադաւանք։

Ա.յո՛ Պապադաւան - Հայք քան զբոզոքականս համեմատաբար բազմաթիւ են՝ այս լինքն դիւրութ թէ մինչեւ վաթսուն հազարի կհասանին։ Եւ սոյա մէջ իսկզբանէ հետէ Լատինական ազդեցութեան ներքեւ հազիւ երկու կուսակցութիւն է եղել՝ եւ այն ոչ կրօնական տեսութեամբ, այլ ազգային զգացմամբ, զոր կազմեալ են Վ.ԵՆԵՒԿԵՑԻ եւ Ր.ՁՕՁԱԿԱՊԱԿԱՆ առաջինքն կրօնի հետ ազգային լեզուն՝ գրականութիւնը եւ ամեն յատկութիւնքը կենդանի եւ անկորուստ պահել ջանալով, եւ վերջինքն՝ զուտ կրօնական զգացմամբք մղեալ՝ ազգային — հայկական յատկութեանց նկատմամբ անտարբեր մնալով։

Ստոյգը խոստովանելով՝ վենետկեցիք իսկզբան շատ զօրաւոր էին՝ մանաւանդ թէ նոքա արդիւնաւորեցին պապականութիւնը, մինչդոյն ժամանակ համայն Հայոց երախտագիտութեան արժանի բազում՝ ջանքեր ունեցան՝ բազում՝ արդիւնք արտադրեցին մեր պատմական լեզուի՝ մեր գրականութեան՝ մեր պատմութեան՝ եւ մեր բազում՝ յատկութեանց համար, բայց քանի՛ սերունդ տեւեց եւ որքա՜ն հալածուեցան, եւ այսօր փնտռեցէ՛ք՝ քննեցէ՛ք եւ բազդատեցէ՛ք բուն վենետկեցիքը թէ ինչ արդիւնք ունին եւ ինչ վիճակի մէջ կգտնուին, ո՛ւր եւ ինչ վիճակի մէջ են Մուրատեան եւ Ոսկիանեան վարժարանները, ո՛ւր են ազգային գրականութեան եւ լեզուի անխոնջ մշակներն եւ քանի՛ հոգի հազիւ կարելի է գտնել, ո՛ւր են եւ կա՜ն ազգային զգացմամբ վառեալ Հայրեր եւ ազգայիններ՝ եւ ի՛նչ կ՚քաշեն։ Հարցուցէ՛ք որքա՜ն կամիք, բայց գոհացուցիչ պատասխան շա՜տ սակաւ կստանա՛ք։ Եւ կտեսնէ՛ք, դի դարձեալ վենետկեցւոյ սերմանած զգացմամբք վառուած եւ ոգեւորուած պապական Հայեր կան եւ կ՚ջանան ազգութիւնը եւ լեզուն եւն վառ եւ կենդանի պահել, բայց կ՚յաջողի՞ն։ — Մեք չեմք կարծեր եւ երբէք չեմք յուսար ցորչափ պապազաւան են եւ կմնան։ Վասն դի ահա մեր առջեւ կեցած են Հասունեան եւ Հակա - հասունեան կուսակցութիւնքն։ Պապականութիւնն միշտ գաղտ եւ հռովմէամոլ եւ ի վատիկան կրթեալ եւ սնեալ եւ բրօբականտային հոգւով եւ մարմնով խնկարկու եւ անձնանուէր եղող միանգամայն մարդկային մի հղիչ անուանեալ մի անձի ձեռամբ կարողացաւ յերիտուս հերձել մեր պապական եղբայրները,

Պահին կեղծաւորուելով՝ եւ Հայութիւնը բոլորովին ոչնչացնելոյ համար մի նոր կանոնադրութիւն ստանալով՝ ջանայ եւ կ՚ջանայ Հայոց լեզուն արտաքսել պապականացեալ Հայոց եկեղեցիէն, ջնջել գէթ սակաւուք միխիթարութիւն եղող եւ իւրեանց գոյութիւնը երաշխաւորող ինքնօրէն կառավարութիւնը՝ հայկական օրէնք եւ սովորութիւնքը՝ դարս ցարդ պատադատան Հայք պաշտած եւ պահած են, միանգամայն կ՚ջնջուի եւ կ՚ոչնչանայ լսատառ լսութիւնն եւ Հայութենէն լսատառ մերկացնել եւ օրում թէեւ խոնարհեցաւ մի մանն Հաստանեան կոչուելով, սակայն ամենամեծ մասն չհնազանդելով՝ ազգասիրաբար գլուխ վերցուց եւ պինուեցաւ Հակահաստանեան կոչուելով, եւ երբեմն յաջողեցաւ մինչեւ անգամ Հաստուն տապալել եւ մինչեւ ի հոսիմ արտաքսել եւ հալածել տալով։ Սակայն այսքանով վերջացաւ գործը։ — Ոչ երբեք։ — Պապականութիւնն իբարկութիւն շարժեցաւ, պինուեցաւ իւր բոլոր զօրութեամբ եւ ազդեցութեամբ, չնայելով որ այս տեսակ երբեմն բողոքականութիւնն եւ պապականութիւնն քաղաքական ազդեցութիւններ շարժեցին եւ ընդդիմահարուեցան՝ սակայն վերջապէս պապականութիւնն մի կերպ զօրացաւ եւ զՀաստուն վերադարձոյց ի դ. Պօլիս, ուր այժմ վերստին կգործէ եւ գիշերայեան անխոնջ կրտքնի։

Արդ՝ ենթադրելով որ այս անգամ եւս մի դիջում անելով եւ իրաւախոհութիւն կազմելով՝ պապականութիւնն թեթեւ զոհողութիւն ընդունի եւ վերջացնէ վէճը, սակայն նկատելով ի ներկայս վենետկեցւոց հետզհետէ խոպառ լքեալ վիճակը եւ տկարանալը՝ միանգամայն Պապամոլիս զօրանալը, մի՞թէ դժուար է հեռատեսել՝ դի պապականութիւնն պապազատան Հայոց մէջ մի օր անշուշտ աւելի յարմար միջոց եւ առիթ պիտի գտանէ իւր վերջնական նպատակը ի գործ դնելոյ համար, եւ յայնժամ չեմք կարծեր՝ որ ներկայիս նման ազգային զգացմամբ վառուած Հայեր աւելի գոնուին, վասն դի ոչ այն վենետկեցիք եւ ոչ Մուրատեան երբեմնն բարեհամբաւ վարժարանն եւ նորա աշակերտք կան եւ պիտի գոնուին, հետեւաբար օտար կրօնից եւ օտար ազգաց մէջ անհետ պիտի կորնչին *)։

(*) Բանաւէր ընթերցողաց ուշադրութիւնը կհրաւիրեմք ամենայրոյս մէջ տալ սկսուած Ղեւոնդ Ա Ալհաստանի Հայոց պատմութեան վերայ, զոր գործոյս մերազնեայ մատենագրաց մէջ պարզելոյ հանդիսացող քաջահմուտ եւ մեծահանճար ու բարձրատիճան Գ. Ա. Ա. աշխատասիրած է՝ որում պիտի տեսանին՝ դի Թուրքիոյ պապական Հայոց եւ Հաստանի դրեթէ համանման են Ալհաստանի Հայոց եւ Նիկոլի անցքը, եւ այնքան տարբերութիւն կայ՝ դի Թուրքիոյ Հայք Մահմետական իշխանութեան եւ տէրութեան նեղքեւ Հայոց մէջ ապրելով՝ համեմատաբար աւելի ապահովութիւն ունեցած են եւ ունին՝ մինչդեռ Ալհաստանի Հայք քրիստոնեայ եւ մանաւանդ պապական պետութեան ներքեւ էին եւ կղզիացեալ դրից մէջ պաշարեալ։ — Արդարեւ քրիստոնեայ եւ մահմետական պետութեանց իշխանութեանց ներքեւ ապրելոյ մէջ մեծ տարբերութիւն եւ ուշադրութեան արժանի խիստ մեծ առաւելութիւն կայ։

Ա.Հաւատիկ այսպիսի տեսութեամբ կարեկցելով եւ գուրգուրալով մեր օտարակրօն սիրելի համաղգայնոց վերայ՝ յանչափս կուրախանամք եւ կմխիթարուիմք՝ երբ կտեսնեմք որ հետզհետէ նոքա կարթնանան եւ կվերադառնան ի մայրենի եկեղեցի Հայաստանեայց, յորում՝ միայն կարող են Հայութիւնն եւ Հայք համախմբուելով՝ ինքնուրոյնութիւն՝ անկախութիւն եւ ապահովութիւն գտանել եւ վայելել, եւ ուր որ գանուին եւ երթան՝ սոյն Առաքելական եւ Ջրհնաւոսահիմն եկեղեցւոյ հովանւոյն ներքեւ ոչ ինչ ծանր եւ դառն վրտանգ չսպառնար նոցա, մանաւանդ աւելի լաւ չէ՞ որ գիտակցաբար ի մայրենի եկեղեցի Հայաստանեայց վերադառնալով՝ ի նմին միացեալ եւ ամուր զօրութիւն կազմեն, եւ ըստ կրօնի եւ ըստ ազգութեան պայծառ եւ անկորուստ մնան, եւ համայն Հայոց համար կրնքան գայթ աւելի ապահով եւ վրկաւէտ միջոց *):

Վ. Ե. Մ.

(*) Ցաւօք սրտի կնկատեմք՝ զի մի քանի օտարակրթեալ եւ իմաստակ գիմակաւորներ՝ ի ներկայս կջանան եւ մի տարբեր՝ խպտառ օտար եւ վտանգաբեր ուղղութեան մշակութիւն ստանձնող խմբագրի լրագրով յորդոր անգամ կարդալ կյանդգնին՝ որ օտարէ հեռ է ջ յուլուիտ եւ այնպէս ջբջանամտ, վասն զի Հայը ներկայ ղրութեան մէջ կորուսած կհամարուի եղել եւ ոչ ինչ օգուտ չունի եղել։ . . . .

Առաւած այսպիսեաց քաջ կամ քաջ տայ, որպէս զի երկար չբաշխե ն . . . .

ՆԻԿՈԼ ՊՈՊՍԿՈՊՈՍ

ԵՒ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԴԱՐՁԻՆ ՀԱՅԿԱԶՆՅՑ ԼԵՀԱՍՏԱՆԻ

Ի ԿԱԹՈԼԻԿՈՒԹԻՒՆ.

(Շարայարութիւն)

Գ.

Պարսից Ալփասլան թագաւորը Անի քաղաքը պաշարել էր մէկ կողմէն եւ առնելու մօտ էր 1062 ին։ Խեղճ բնակիչները յուսահատութեան մէջ ընկած՝ միւս կողմէն ելան՝ յիսուն հազար հոգի, եւ Տրապիզոնի ու Վրաստանի ճանապարհովը ցրուելով գնացին մինչեւ Ազտաբերականի կողմերը, անտի կիսով չափ ի Խրիմ եւ կիսով չափ ի Լեհաստան։ Սոցա օրինակին հետեւելով՝ թէ դարձեալ Անիէն եւ թէ Հայաստանի ուրիշ կողմերէն այլ եւ այլ ժամանակ հարիւր հազարէն աւելի Հայք նորէն ցրուեցան Եւրոպայի զանազան կողմերն, ինչպէս որ յայտնի է աղգիս պատմութենէն։

Անիէն Թաթարստանի վերայէն ըստ մասին Խրիմ անցնելով, եւ ըստ մասին ի Մոլտաւիա՝ եւ անտի Լեհաստան գընացող Հայերն գլխաւորապէս Կալիցիա, Փոտոլիա ու Վոլինիա նահանգներուն զանազան քաղաքներն ու գեղերն բնակեցան, ինչպէս Եաղլովցա, Զվանեց կամ Զուանչա, Կամենից, Ստանիսլաւ, Սնեաթին, Պժեժան, Հուռտենքա, Զա-

մոց, Գուրթեր, եւլն. բայց խակղբան ըրնակեցան մեծ բազմութեամբ Կալիցիոյ մայրաքաղաքին այս ինքն Իլվովի (1) մնտերն իբրեւ զատ արուարձանի մէջ, որպէս զի օտարազգի բնակիչներուն հետ չխառնուին։ Իսկ երբ սկսան Լեհայոց լեզուն հասկնալ, եւ հարստութեամբ, վաճառականութեամբ եւ պէսպէս քաղաքական եւ զինուորական պաշտօններով յառաջանալ, մտան նաեւ բուն քաղաքն, եւ այնտեղ երեք վոքրիկ եկեղեցիներ շինեցին, որ այժմ քանդուած են։ 1183ին կանգնեցին վայոտաշէն եկեղեցի մի, եւ երկու հարիւր տարիէ չափ յետոյ, այս ինքն 1363ին շինեցին այն հոյակապ քարաշէն եկեղեցին՝ որ կեցած է մինչեւ ցայժմ, բայց կեցած է՝ ոչ իբրեւ պէտպէն տաճար, այլ իբրեւ վաճառատուր ընդ՛ Հայկական ազգութեան. վասն զի մինչեւ անուններ մը նոցած է Հայոց եկեղեցի, իսկ մէջը լատին եկեղեցւոյ դասանանքն կպաշտուի՝ լատինական արարողութիւններով, թէպէտ եւ Հայերէն լեզուով՝ զոր ժողովուրդը ամենեւին չհասկնար, եւ անոյշ ժամ պատարագ անող եկեղեցականներն եւս հազիւ թէ կմմանան։

Ղազար Ջահկեցին կաւանդէ մեզ՝ թէ Լեհաստան գնացող Անեցիներն Հռոմոնէն հպատակ Հոգիէն ալեվի էին՝ պատկաս չէին։ Իսկ այժմ Էօվլը կամ Ովլը Հոգիի հաղիւ կգտնուի իր Հայազգի սերունդ լինելը գիտցող կամ խոստովանող։

Շատ հետաքրքրական բան է այն եկեղեցւոյն շինութեան ժամանակը մատնանշող արձանագրութիւնը՝ որ է այս։

«Յիսուս Քրիստոս։

«Ա՛յս մեր կամայ եւ հաւատով գի-
«է, Յակոբիս որդւոյ Շահնշահին՝ քնա-
«կան կաֆացի, եւ Փանոսի որդւոյ Ա-
«րանի՝ քնական Ղազարցի, որ տուաք
«զայս հաւատոյ գիրս, որ ոչխտեցաք վա-
«սըն սուրբ Աստուածածնին, եւ շինեցաք
«իՂոմ քաղաքս, Հայոցաստան ասըբ Լա-
«ատըչին ասըլնատն, հնազանդ եկեղեցի-
«ն, և Հայ եպիսկոպոսի և հայ փանոսցո-
«ցըն, որ յայսմ հետէ ոչ մեր որդի, ոչ
«դուստր, ոչ եղբայր, ոչ ազգ, ոչ թոռն,
«զարգ՝ զաղորմութիւնն որ առնեն, այլ
«իշխանութիւնն չառնեն ի վերայ եկե-
«ղեցւոյն կամ քահանայի կամ տանու-
«տրաց կամ ի վերայ եկեղեցւոյ ընչից։
«Ով որ յանդգնի կամ լրբութիւն առ-
«նէ, նա սուտ է յաւիտենայն դատաստան
«եւ պատժի յԱստուծոյ եւ ի սուրբ ե-
«կեղեցւոյ, եւ ի սուրբ Աստուածածնէն
«եւ ի սուրբ առաքելոցն, վկայութեամբ
«Աստուծոյ եւ տանուտրաց։ Գրեցաւ գի-
«րըս ի թվ. ՊԺԲ (1363) յաւգաւստոսի
«երեսունն աւրն։ Ես Աբրահամ ալագե-
«րեցս վկ.» եւլն.— Այս խօսքերս գրողներուն մտքէն եթէ անցել եր՝ թէ ժամանակ պիտի գայ, որ Հայապահան ասըբ Լուսաւորչին օրհնաց հետքն անգամ պիտի չմնայ այն եկեղեցւոյն մէջ, եւ եպիսկոպոսն եւ տանուտէրերը՝ այս ինքն

(1) Իվով անուան բուն Լեհերէնն է Լվով (Լեռնի քաղաք)՝ Լատիներէն Լեոպօլիս, Գերմաներէն ձեւով Լէմպերկ։

ժողովրդեան գլխաւորները՝ այլ եկեղեցական-ընեան ձեռք սիւոի մասնեն իրենց եկեղեցին եւ ազգութիւնը, անշուշտ մարգարէական հոգի սիւոի ունենալին որ գուշակէին՝ թէ երեք հարիւր տարիէ չափ սուրբ էջմիածնայ կաթողիկէին հնազանդ մնալէն յետոյ՝ Հայ անուանի անարժան եպիսկոպոսի ձեռքով՝ պապական եկեղեցական-ընեան գերի սիւոի լինի այն հոյակապ եկեղեցին իւր քահանաներովը, տանուտէրերովը, ժողովրդովն եւ ամենայն հարստութեամբն ու ղարդարանքներովն, ինչպէս որ սիւոի պատժեցաւ։

Լեհաստան գնացող Հայոց լեզուն Անդրեզոյ բարբառն էր, որոյ հետքը մինչեւ ցայժմ մնացած է թէ՛ այն կողմերը՝ թէ Մաճառստանի եւ թէ Խրիմու եւ Նախիջեւանի Հայերուն մէջ։ բայց Թաթարստանի Ախտարայ քաղաքէն եւ մօտաւոր տեղերէն 1318-էն յետոյ Խրիմ՝ եւ Լեհաստան եկող Հայերն՝ Թաթարաց լեզուին գրեթէ այն կերպով վարժ էին, ինչպէս որ այժմու Փոքր Ասիացիք, Ռումելիցիք, Մոլտաւիացիք եւ Պեսարաբիացիք՝ տաճկերէնի. այս պատճառաւ իւրեանց ազգի դիւրին եւ ընտանի երեւցած է այն Լեհերէնով Հայերէնով ու Թաթարերէնով խառն Զապլնայէ կամ բառն Թուրքէ լեզուն՝ քան թէ պարզ Հայերէնը՝ որ նոյնպէս խառն էր Թաթարի ու Լեհի բառերով։ Օրինակի համար՝ առաջ դնեմք այստեղ քանի մի կտոր խօսք՝ Լեհաստանի Հայոց այն լեզուէն՝ որով կխօսէին եւ կգրէին, գէթ նոքա որ Հայերէնը իւրեւ ազգային լեզու՝ պատուաւոր կհամարէին, եւ գրոց լեզուին աւելի տեղեկութիւն ունեցողները սորա մէջ գրաբառ խօսքեր եւ ոճեր կխառնէին։

Իլվովի առաջնորդ Խաչատուր եպիսկոպոսը 1467 թուականին խոստմնագիր մի տուած ունի Իլվովի ժողովրդեան, որոյ կէս գրաբառ լեզուն եւ պատմական նշանակութիւնը դիտելու արժանի բան է եւ է այս։

«Յիսուսէ Քրիստոսէ Ծառայ Խաչատուր Արքեպիսկոպոս։

Ի թուականութեանս ՉԺԶ (1467)։

«Ի ժամանակս երկոս երանեալ Հայրապետի Հանուրց Հայաստանաց Տեառն «Յովհաննէս Կաթուղիկոսի, եւ Պատրիարքի Վաղարշապատու սուրբ Էջմիածնին Նուաստս ի բանայսիրաց «Խաչատուր Եպիսկոպոս Ձեռնադրեցայ «Եպիսկոպոս Իլվի աթոռոյն եւ իբր վճռակացս, եւ ողորմութեամբն աստուծոյ «եկեալ հասաք ի մեր հաւատս*) որ Աստուծոյ եւ ի մեր հայրապետին անձնեդայ մեզ։ Եւ ի սոյն աւուրս շնորհաւք «Փրկչին եկեալ հաստեալ կային սուրբ եւ «պարծանաց պարծանք Նախրարքն Տէր «Անանիաս արհի եպիսկոպոսն եւ Տէր «Թումա եպիսկոպոսն ի աստուածաշէն «եւ տիրախնամ քաղաքս Իլվիս։ եւ հանդէս ժողովեցան միայգումար ամենայն աւրհնութեանց արժանաւոր երջանիկ եւ ուղղափառ ժողովուրդ քաղաքիս ի գաւիթս աստուածայինս լուսոյ «մասս ի մենաստանիս։ որ է ընդդէմ «քաղաքիս, խնդիրք արարին զայսքան «քանքս։ Եւ ես նուաստ եպիսկոպոսս

(*) Դուցէ հաւատս (հօտս) լինի։ Ս. Խ։

«Ցանուն Աստուծոյ, ամէն եւ վան
«ապագայ յաւիտենական յիշատակի: Ա-
«մենեցունց առ հասարակ եւ առանձին
«գիտութիւն լիցի ներկայ Բրիվիլեկի [1]
«իմոյ նամակաւն:
«Որովհետեւ ամենայն քաղաքացի
«պայծառաշնորհութիւն լինի, աւելցնելով
«զընակիչս նորին, եւ զժողովուրդս, ես
«ալ միաբանելով զշնորհութիւն եւ զպայ-
«ծառութիւն իմ ժառանգաւոր քաղա-
«քին Ռաշքօվայ, աւելնալով ամէն կեղ
«ժողովրդոյն, եւ մանաւանդ ազգաւն
«Հայոց պաղիրկանայ, վանն այնորիկ այս
«Հայադգ ժողովրդեան կուտամ զիմ Բը-
«րաւան [2], որն որ իմ բրաւայովն սկզբ
«եւ մինչեւ իւրեանց հասատուվն գալ
«Ռաշքօվն, տան շինութիւն եւ պահպա-
«նութիւնն անեն, տինճ եւ համար-
«ձակ ընակելով: Եւ պարնականի իմ խօս-
«քով խոստանամ վերոյիշեալ Հայոց աղ-
«գիս, թէ զամենայն արդելքուներն [3]
«եւ բունքթիաններն [4] ներքոյդրեալ ըլ-
«րալային բեռնել եւ պահել՝ պարտա-
«կան եմ յամենայն ժամ, եւ յաւիտ-
«եանս: Նմանապէս եւ իմ հետեւողքն
«Ռաշքօվայ ժառանգապէկք պարտա-
«կան ըլնան [5] խօսքս բռնել, եւ պահել
«Հայադգիս եւ իւրեանց հետեւողացն
«յաւիտեանս: Բրնամանուն կայսրուած-
«քին գօրաւ եւ բրաւային արդելքուներն
«եւ բունքթիաններն են այնորիկ»:

«Ա. Տամ Ռաշքօվայ Հայ ազգին իշ-
«խանութիւն՝ որ ունենան զկատարեալ

(*) Հայրապետը բառին մէջն եղ (ե) տառին վերայ պատիւ դրուած էր ի ձեռագիրն, արդեօ՞ք հայրապետո-ՆԵ՞ՆԻ ասել կամէր: Ս. Խ.

(1) Արտօնութեան. 2) Իրաւունք. 3) Յօդուածք. 4) Հատուած, կէտ. 5) Պետի լինին

«Խաչատուր խոստացայ կատարել առաջի
«Աստուծոյ: Նախ՝ եկեղեցեաց եւ ընչից
«հրամանս չայնենք՝ առանց տանուտէրացդ
«հրամանին: Բ, որ քահանայից մտոցն
«ձեռնամուխ չի լինիմք եւ ոչ նոքա իմ
«մուտքաց, որպէս առաջի հայրապետին*
«ժամն էր: Գ, որ զայս տեղացս լրիցա-
«նուն զգաստանն զգաստաստանն ի տեղս
«այնենք հետ տանուտէրացն եւ այլ տեղ
«չի ձգենք: Դ, որ զքահանայ կամ ըզ-
«սարկաւագ առանց տանուտէրացդ հրա-
«մանին չի այնենք: Եւ որ անհասուկ խը-
«նամութիւն կամ այլ անհաս բան կա-
«շաւաւք չի այնենք: Ա,յլ թէ մահու թէ
«կենաց ինչ որ իւրեանց կարեացն հոգոյ
«բաժին հանեն, կամ տան զայն առ-
«նունք: Եւ այլ աւելի չի պահանջենք:
«Ա,յլ եւ եկեղեցական եւ հայրապետ ըլ-
«նելոյ հրամանք չանենք առանց տանուտ-
«տրացն հրամանին: Եւ այլ ինչ բան որ
«լինայ կամ դատաստան հոգեւոր կամ
«մարմնաւոր, առանց տանուտրացն չայ-
«նենք: Եւ այլ թէ Կաթուղիկոսն Տէր
«Ներսէսեան վերսահն հրամանն այնէ
«եւ զվոլ քաղաքս տերունի այնէ գրով,
«եւ պատասխան տամ Կաթուղիկոսին
«Աստուծով»:

Ա,սկից աւելի հասարակ լեզուով է Լիւսովիրսքի իշխանին Ռաշքովի Հայոց առաջ հրովարտակը, որ այս է:

«Յովսէփ Լիւսովիրսքի Ռաշքովայ
«ժառանգապէկ, եւ այլ:

«Ցանուն Աստուծոյ, ամէն եւ վան
«ապագայ յաւիտենական յիշատակի: Ա-
«մենեցունց առ հասարակ եւ առանձին
«գիտութիւն լիցի ներկայ Բրիվիլեկի [1]
«իմոյ նամակաւն:
«Որովհետեւ ամենայն քաղաքացի
«պայծառաշնորհութիւն լինի, աւելցնելով
«զընակիչս նորին, եւ զժողովուրդս, ես
«ալ միաբանելով զշնորհութիւն եւ զպայ-
«ծառութիւն իմ ժառանգաւոր քաղա-
«քին Ռաշքովայ, աւելնալով ամէն կեղ
«ժողովրդոյն, եւ մանաւանդ ազգաւն
«Հայոց պաղիրկանայ, վանն այնորիկ այս
«Հայադգ ժողովրդեան կուտամ զիմ Բը-
«րաւան [2], որն որ իմ բրաւայովն սկզբ
«եւ մինչեւ իւրեանց հասատուվն գալ
«Ռաշքովն, տան շինութիւն եւ պահպա-
«նութիւնն անեն, տինճ եւ համար-
«ձակ ընակելով: Եւ պարնականի իմ խօս-
«քով խոստանամ վերոյիշեալ Հայոց աղ-
«գիս, թէ զամենայն արդելքուներն [3]
«եւ բունքթիաններն [4] ներքոյդրեալ ըլ-
«րալային բեռնել եւ պահել՝ պարտա-
«կան եմ յամենայն ժամ, եւ յաւիտ-
«եանս: Նմանապէս եւ իմ հետեւողքն
«Ռաշքովայ ժառանգապէկք պարտա-
«կան ըլնան [5] խօսքս բռնել, եւ պահել
«Հայադգիս եւ իւրեանց հետեւողացն
«յաւիտեանս: Բրնամանուն կայսրուած-
«քին գօրաւ եւ բրաւային արդելքուներն
«եւ բունքթիաններն են այնորիկ»:

«Ա. Տամ Ռաշքովայ Հայ ազգին իշ-
«խանութիւն՝ որ ունենան զկատարեալ

(1) Արտօնութեան. 2) Իրաւունք. 3) Յօդուածք. 4) Հատուած, կէտ. 5) Պետի լինին

«իւրեանց ուրէնտան [1]), այս ինքն վօյթ [2]) «տասներկու աղայովն, եւ քառասուն «աղբարանցմովն, եւ այլ ամենայն քա«զաքաց երկայովն [3]): Եւ այս Հայ աղ«գիս ամենեցունց վիաբան հաւանու«թիւնովն ամէն նոր տարի էլէքցիայի [4]) «ընտրած եւ երդվընցած վօյթին ձեռն «կուտամ զօրավարիս Իւրիասխէցիային [5]), «զի ծր Աղանուն, այս ինքն երդվընցած «դատաւորացն հետ միասին նստելով, «զամենայն իւրեանց ազգի մէջ բօղօչ«նիյ [6]) եւ քրիմինալի [7]) շարիաթինուն «դատաստանն կըտրէ, եւ վճռէ տէքրէ«թովն, եւ զայսպիսի տէքրէթներն պի«դրէ բիսարն [8]) իւրեանց Աքթանուն [9]) «Բօթաօքուլի [10]) մէջ:

«Ը. Սալդ [11]) մէկ Աբբէլայիան [12]) իւ«րեանց Տէքրէգէն պաշականի առ իմ, «կամ իմոյ վէգիլին դատաստան: Եւ «զայսպիսի աբբէլլայիանուն տէքրէթ«ներն իմ կամ իմոյ վէգիլին ձեռօքն ըս«տորագրեալ պարտի Հայոց բիսարն գը«րել իւրեանց աքթանու մէջ, աքթօ«րին [13]) եւ բօզվլանին [14]) հաստատու«թեան համար:

«Թ. Եւ այս Ուրենտին համար նշա«նեմ պաշխայ դատաստանատուն Ռա«թուշին [15]) մէջ, ուրուն [16]) զիւրեանց «դատաստան, եւ զամենայն երկայն պա«նին [1]):

«Ժ. Այս Հայ ազգս լիցի մանակից «ամենայն կէլուրից քաղքին, պարտպար «Լեհ ազգին հետ. այնու համար պիտի «ընտրեն իւրեանց միջէն խելօք վերակա«ցու ամէն նոր տարի երդվընցած, որ «զայնպիսի կելուրն ժողվէ եւ խարճէ «ըստ կամայ իւրեանց ուրէնտին» եւ «այլն *):

Եւ թէպէտ այս աւեր լեզուն աւելի եւս աւրուել է հետզհետէ, բայց մինչեւ ցայժմ սորա նման լեզուով կխօսին այն Հայերն որ Լեհաստանի ու Մաճառըստանի մէջ գոնէ իրենց ազգութեան ա–նուն–նը անկորուստ պահել են: Սակայն զարմանալին այս է որ վեշտասաներորդ ու եօթնեւտասներորդ դարերուն մէջ թաթարերէն խօսիլն ու գրելը կհամարուէր նոցա մէջ իբրեւ ընդունելի առաւորութիւն, եւ այն լեզուն Հայերէնէն աւելի ոամիկներուն դիւրիմաց: Եւ որովհետեւ այս թաթարերէնի գործածութիւնը 1500 թուականէն յետոյ կերեւնայ գրուածոց մէջ, կարծիք կայ թէ այն ժամանակները թաթարստանէն նոր գաղթականութիւն մի եւս եկած է Լեհաստան, որոյ սովորական լեզուն թաթարերէն է եղած: Օրինակի համար դնեմք այստեղ Գրօշէնէի մի օրինակ, այս

(1) Կառավարութիւն, վարչութիւն: 2) Տանուտէր, քաղաքագլուխ: 3) Կարդ, սովորութիւն: 4) Ընտրութիւն: 5) Իրաւաստութիւն: 6) Հասարակ: 7) Քրէական: 8) Գրագիր: 9) Արձանագրութիւն: 10) Ցիշատակարան: 11) Մխայն: 12) Բողոք: 13) Խնդրատու: 14) Պատասխանատու: 15) Խորհրդարան: 16) Ուր որ տեղ:

(1) Պետի անեն:

(*) Ամբողջ հրովարտակը և սահմանադրութիւնը կարող են տեսնել ցանկացողք Բժշկեան Մինաս Վարդապետին "Ճանապարհորդութիւն ի Լեհաստան" անունով գրքին մէջ, երես 167—183:

լինքն հարսանեաց յիշատակարան, որ Նիկոլ եպիսկոպոսին կնքովը կնքուած եւ ուրիշ եկեղեցականաց ու գաւառացոց վկայութեամբը հաստատուած է.

«Ի թուին ՌՀԹ. բանիս Հաննանկ ուխտի-
«լը ճանապարհն ձեռնադիր Վասիլ եպիսկո-
«պոս պարոն Իվազովն բանիկոսոնակ:
«Պօղոս Իլվա, 22 sep. 1629 ուրբաթ,
«նէին հալէպացոյց տօրա, քարտուղարն-
«պոս ուխտն Հիսնոնդոնակ՝ պէտի մե-
«ղադրվի այնմանիկ, աւետարանչութեանդ պէտ
«Հաւատքիանկն, երեսփոխանութեանդ պարոն
«Հաւրկօղլը-Պէրնարովեցի Յովհաննէսոնակ»:
Այս ինքն, «Դրօրիկնք տիկնոջ Աննայի
«դստեր պարոն Վասլի Փիլիպպոսեան,
«եւ պարոն Գրիգորի Յովհաննեսեան:
«Եղեւ յիւրմով ի 22 Սեպտեմբերի 1629
«ամի քրիստոսին Գերմանացւոց, ի
«թագաւորութեան Սիգիսմունտոյ եր-
«բորդի՝ բարեգութ տեառն մերոյ, յա-
«ւագերիցութեան տեառն Զաքարիայ,
«յերեցփոխանութեան պարոն Թորոսի
«Պերնարդոյ Զատիկեան:»

Նոյն 1500-էն մինչեւ 1650ի ժամանակները Հայերէնէ թարգմանուած կերեւին նաեւ մեր մէկ քանի եկեղեցական գրքերն ու ժամերգութեան աղօթքները, յորոց օրինակի համար մէջ բերեմք նոքաստեղծեալ երգին առաջին տան թարգմանութիւնը տող առ տող, որպէս զի բնագրին խօսքերուն հետ բաղդատելը դիւրին լինի բանասիրաց:

«Լանկէ եսուպդբ ասլա- ընանկընինկ
հեվլէպան
Ա-ալ գօգնո- գօգնոնկ
Տա գօգպակէ վէրա-վարընք ընինոկ
Ընկլօվ-կէ ջրնէրալարնէ
Տա ահկէվկէ էլհենդալարնէ պէօրդոն-
խարկնուէնթա՝ պօկան պէրլարդէ *)
Խայնէարդ- պնա պայմա հայպոնլանէ յէր
Նէրդրդո-նկն այրովսո-ղ:»

(Նորաստեղծեալ բանն յանէից
Խակզբանն ի վերկինս երկնից.
Եւ վերինային զօրս անմարմնոց
Իմանալեացըն զուարթնոց
Եւ զգալի տարերց քառից
Հակառակաց միաբանից,
Որոյ յաւէտ փառաբանի
Երրորդութիւնն անճառելի:)

Լեզուն այս կերպով կորսընելով, մինչդեռ հարուստներն ու մեծերը աւելի լեհերէն կխօսէին, եւ հասարակ ժողովուրդը թաթարերէն, հարկ է եղած որ գաւանանքնին եւս կորսընեն: Լեզուին կորսուիլը այն Հայերուն ազգութեանը մահացու ծանր հիւանդութեան մէջ ընկնելուն նշան էր. իսկ գաւանանքը կորսընելով՝ հոգին պիտի փչէր: Այս ցաւալի հոգեվարքը երկար քշեց, եւ հոգիաւ աղգասպանն եզաւ Նիկոլ անարժան եպիսկոպոսը հետագայ կերպով:

(Շարայարընէնն յաջիկայ)

Գ. Ա. Ա.

(*) Սէքթանէց ածականը սխալ Հասկացած ու քայլ տեղ առած կրնամ թարգմանիչն որ պէտարդէ (պէտրէնդէ) թարգմանել էր իրը [illegible] միաբանեաց, միաբանեց.— Սորա նման սխալներ և անճշդութիւններ միւս խօսքերուն մէջ եւս կերեւին, և զարմանք չէ

ՍՈՒՐԲ ՍԱՆԴՈՒԽՏ

(Շարունակութիւն)

Թիւինապահք Թագաւորին հրամանը կատարեցին. իսկ նախարարք և զօրապետք ըստ կարգի պատուոյ ապարանից դրսի ընդարձակ գաւթին մէջ կանգնած Անդղխոտոյ զալստեան կսպասեն: — Ահա ապարանքէն ներս մնաս. հագած էր կարմիր բհհղեայ ասղնագործ պատմուճան մինչև ոտքերը հանգրվանալ, գլուխը ոսկեթել մարգարտայիւս սկսմքը զարդարեալ պսակ կապած՝ վրայէն սպիտակ ապարօշ ձգած էր. մազերը գեղձան ծամակալներով հիւսուած մէջքէն վար կհանէր. սրտին վերայ ականակուռ քանդակուած արքայատառ դրոշմը կփայլէր. առջևէն Թիւինապահքը Թագաւորական արձիւը կկրէր. երկու նաժիշտք պատմուճանին տորոտը կվերցնէին. իսկ ինքը մէկ ձեռքը երրորդ նաժիշտին ուսը ձգած՝ հօլը ներկայացաւ: Իսկոյն նուագարանը ուրախական երգով դինքը ընդունեց, նախարարք ողջունեցին, և Անդաստրուկ գահէն ցատկելով վազեց ընդ առաջ՝ գրկեց և համբուրեց, և ձեռքէն բռնած իրեն քով պատրաստուած գահին վերայ բազմեցուց:

Ոչ այնչափ շքեղ կփայլէ երկնային ուրուանակը ի խոնարհ շողշողուն աստեղաց՝ որչափ Անդղխոտ այն հանդիսին մէջ. բարձրահասակ, վեհատեսնամեայ, ինչպէս շուշան նազելի և չքնաղ էր. աչքերը խարտեաշ, շնորհալի սյտերը նորափթիթ վարդերու նման ծաղկած կվառէր. սէրը իւր նմանութեան և գեղեցկութեան պատկեր դինքը ստեղծած էր. հայեցուածքը սիրատենչ, սիրավառ աչաց մէջ հոգւոյն պատկերը կփայլէր: Նախարարք և մեծամեծք իրարմէ առաջ կանցնին որ դինքը ողջունեն, և նորա մէկ ակնարկութիւնը կամ ժպիտը ընդունին:

Երկար առեն նուագարանը հնչեց. ուրախ էր Թագաւորը, սիրտը յորդահոսան գետի պես կյուզէր, հոգին խորհուրդներու մէջ կծփայր. կվերանար, կերևակայէր Հայաստանի բաղդը որ իրմով այն օրէն կըսկըսէր. պատերազմաց դաշտերէն յաղթական կդառնայր, աշխարհներ իրեն հարկատու, Թագաւորութեան սահմանը ընդարձակած, ծիրանին ազգաց և ժողովրդոց վերայ կծաւալէր: Ու երբեմն ալ Հայաստանի ներքին բարեկարգութեան և խաղաղութեան վերայ կմտածէր, ինչպէս Տիգրան, ինչպէս Վաղարշակ և Ըրատշէս աղդը պայծառացնէ:

Ներքին խորհուրդները կերպարանաց վերայէն իրրեւ սուտեր կանցնէին. նախարարք կաշխատէին Թափանձել հոգին, իսկ նուագարանը հետզհետէ աւելի աղդու կհնչէր որ զԹագաւորը Թմրութենէն սթափէ: Ոչ սիրոյ և ոչ պատերազմաց երգերը հոգւոյն կազդէին. այն առեն Անդռնեայ սիրալիր ձայնիւ, «Հայր», կանչեց, և գիրկը բնկաւ. սթափեցաւ Անդաստրուկ, ինչպէս այն որ խորին քնէ կզարթնի, իմացաւ որ ցնորքներու մէջ էր հոգին. և Անդղխոտոյ ճակատին հայրենի շըրթանդ համբոյրը նուիրելով՝ կրկին զուարթացաւ:

Իսկ Պաղեստինացին դեռ ևս անդ կանգնած կսպասէ մինչև պատակները լսել, աեսաւ դինքը Անդղխոտ, դարձուց աչքը

վերան, և մկկէն ծերունւոյն աչքերէն հոգւոյն երկնային սիրոյ կայծը փայլատակելով թափանձեց օրհոդին սիրտը, վառեց և բորբոքեց։ Ծագաց Սանդուխտ սրտին վըստահութիւնը, կդրօվէր, կվճայլէր և ծերունւոյն կսիրէր. ուստի դարձաւ, «Ո՛ է հայր, հարցուց այդ ծերունւոյն, և ուստի՞ եկած է»։ Եյն ատեն Սանատրուկ աչքերը ժանտացնելով յառաջ կանչեց զՊաղեստինացին, «Ա՛ահուան պատանիները պիտի տամ այժմ, ասաց, որովհետև զրկիս անարգեց, օտար և անճանօթ Աստուած քարոզելով թագաւորութիւնս կվըտռէ»։ «Ես ևս կփափագիմ. լսել,» կրկնեց Սանդուխտ, «խօսէ ծերունիդ, ասաց, ուստի՞ կուգաս, և զի՞ Աստուած կքարոզես»։—

«Սիրոյ և փրկութեան Աշմարիա Աստուածը կքարոզեմ, պատասխանեց Պաղեստինացին. ինքն ստեղծիչ է ամենից և ամեն արարածոց»։ — Իսկ անուշնըն ի՞նչ է, ո՞ւր այրունիքը, և ո՞ զեզ յայտնեց զինքը», կրկնեց Սանդուխտ։ — «Անունը Աշմարտութիւն և սէր է, պատասխանեց Պաղեստինացին, որ իւր արարածոց սիրոյն համար երկնային վառաց դահէն յերկիր իջաւ, յայտնեց զինքը մեզ, և օրէնքները քարոզեց. մահ յանձն առաւ, խաչափայտի վերայ բարձրացաւ, և արեամբը օրէնքները ինքեղով մեզ աւանդեց. ես ականատես եմ նորա փառաց, և վկայ աստուածութեան»։ — «Իսկ ո՞ զքեզ առ մեզ զրկեց», հարցուց Սանդուխտ։ — «Ինքն Աստուած, պատասխանեց ծերունին, որ ձեզ իւր օրէնքները պատմեմ։ միթէ կընաս չսիրել այն Աստուածը՝ որ ինքը զմեզ սիրեց, և մեզի համար մեռաւ. կընաս չնուիրել իրեն երկրաւոր ճոխութիւնդ, հոգիդ և արիւնդ, որպէս զի նորա աստուածային սէրը և յաւիտենական թագաւորութիւնը ժառանգես»։ — «Ուրեմն Աստուած մեր սիրոյն համար մեռաւ, կրկնեց Սանդուխտ. միթէ ո՞ք ցանկայ՝ կրնայ զինքը սիրել և պաշտել. կամ կընդունի այնպիսւոյն սէրը որ ցարդ զինքը չէր ճանչնար»։ — «Ինչպէս սիրոյ՝ նոյնպէս և զթութեան Աստուած է, պատասխանեց Եւաքեալը. կընդունի այն անսուրբ հոգին որ բոլորով սրտիւ առ նա կդիմէ։ Պատկամ և կմաղթեմ ինչպէս քեզ, թագաւոր, նոյնպէս և քեզ զըլխոյդ, որ ճշմարտութեան ճառագայթներով լուսաւորէ զձեզ»։

Պաղեստինացին խօսքը աւարտեց, թագաւորը աչքերը վըրան ուղղելով կուզէր պատասխանել, ահա Սանդուխտ, «Թագաւոր Հայր իմ, ասաց, ես այս ծերունին մահուան արժանի չեմ տեսներ. ինչ է մեղքը, սիրոյ և փրկութեան Աստուած կքարոզէ. զուցէ նա է միայն Աստուած՝ որոյ անունը ոչ ոք մեզ պատմած չէր. և կամ կրնանք քուրմք հաստատել թէ Աստուած միայն Ափրոդիտէ, Վահագն և Վանատուր դիք են, և ստուտ է այն որ այս ծերունին կքարոզէ։ Խնդարսէ, Հայր իմ և թագաւոր, հարցնենք քննենք ճշմարտութիւնը, և կամ ազատ արձակէ զինքը որ սահմաններէդ երթայ, և մի՛ շաղախեր անպարտ արեամբ ձեռքդ, և ի վրէժխնդրութիւն շարժեր Աստուածը քո և բոլոր աշխարհին վերայ»։

Հաւանեցաւ թագաւորը Սանդխտոյ, և դարձաւ ինքն ալ այս խօսքերը կրկնեց Պաղեստինացւոյն. «Տես որ բոլոր աշխար-

հրա արիւնը կենդրէ, բայց ես ի պատիւ դից և արքայադստերս չուզեմ նոցա արդարութեան բողոքը կատարել. ուստի եկ, գնա թագաւորութենէս, և դարձիր ի Կողզոթա ուստի եկար»:

Ա՛կկէն երկու թիկնապահ առին զՊաղեստինացին դուրս հանելին. քիչ մը վերջը Անդուխտ ինքն ալ առագաստը առանձնացաւ: Բայց գիշերային ժամերը հետզհետէ կ՚յաջորդէին, ուստի վերջին անգամ՝ նուագարանը հնչելով, կհրաբիբէր զԱնաստուկ երթալ գահոյքը հանդչել, և հանդիսը կցրուէր:

Թագաւորական ապարանից մէջ խորին լռութիւն տիրած է. Անաստուկ արքունի ծիրանեաւ սփածեալ կընկղջ ի գահոյս, և Ըրշակունի արծիւը գահին վերայ թեւատարած գիշերային անուրջներով հոգին կբռվոփէ: — Կ՚իշեր է. թագաւորաւոր մէկ տեղ աշխարհն կընկղջ. միայն Անդուխտ Հայաստանի հաւատով բողբոջած անթառամ ճաղիկը անքուն է:

Կ՚իշերավար աստղը երկնից կամարին վերայ ճաճանչելով աղօտալոյս Երարատայ բարձրաղիտակ սարը կլուսաւորէր, և Շաւարշանու փողոցներուն մէջ երթևեկը դադրած էր. եկաւ Անդուխտ ծպտեալ առագաստին նաժիշտը հետը, և Պաղեստինացւոյն օթեւանը կփնտռէ: — Ո՜վ մեծ և փառաւոր յաղթութիւն: — Ահա առաքելոյն ոտքը խոնարհած, ծիրանին և թագը Աստուծոյ կնուիրէ, և արտասուալից հայցմամբ կխնդրէ որ նորա սուրբ պատուիրանաց ճշմարտութիւնը իրեն սորվեցնէ. — «Հաւատացէ, կասէ, հայր իմ, քարոզութեանդդ. սիրեցի զԱստուած, որ սիրոց վրէժ և մեր սիրոյն համար մահ յանձն առաւ. սորվեցուր ինձ օրէնքները, որովհետև զինքը կուզեմ՝ միայն սիրել»:

Ա.քանչելի ժամ. — Հայաստան խոր քնոյ մէջ կընկղջէ, բայց իւր հրեշտակը զարթուն է, և նորա հաւատոյ հիմը իւր կուսական ամրիծ հողւոյն մէջ կհաստատէ. կնուիրէ Աստուծոյ հօրը թագաւորութիւնը, աշխարհը և ժողովուրդը. կխոստանայ որ այն աղդը պիտի ճանչնայ զկնքը, սիրէ և ծառայէ. պիտի կորճանէ բազիններըը, և նոցա աւերակաց վերայ տաճարներ կանգնելով՝ փառաց և անուանը համար պիտի պատերազմի:

Հրաշալի՜ դաւանութիւն. որ Հայաստանի հրեշտակին Անդուխտոյ շրթունքներէն դէպ ի Աստուծոյ գահը կբարձրանար:— Իսկ առաքեալը Աստուծոյ՝ և նորա մէջ միջնորդ կանգնած վեց արտասուախառն աղաչանքները կլսէ: Ահա Աստուած զարձուց ակնարկութիւնը անբասեղծ ժամանակաց վերայ ձգեց. պատառելոյն վերեւկկլով ակնարկութենէն ոչնչութեան հնչեալ կափարիչները. զարեր և ժողովուրդներ դուրս ելան և իրեն դիմաց կանգնեցան. տեսաւ որ այն աշխարհին դիւցազազնօն ահարկու Թագաւորը ժողովրդով ի միասին իրեն կհաւատար. կկորճանէին կատապալէին մեհեանք և դիք, և սուրբ Խաչին միայն երկրպագութիւն կանէին: — Կանցներ այն ժամանակը և ուրիշ դար մի իւր անունը օրհնելով ոչնչութենէն կելլէր. կըլսէր զինուց շաչիւնը և որոտումը որ յԱեարայր ի փառս անուան իւրոյ պիտի գոռային: Աստուածային զթութիւնը, սէրը և զօրութիւնը իրար խառնուեցան, և իրերաց միջնորդեցին. լսեց Անդուխտոյ խոստմունքն, ընդունեցաւ նորա

սիրոյ հուէրը, և ապրեց առաքելոյն Յոգւոյն որ ընդունի զինքը, սրբէ, օծէ և իրեն նուիրէ:

Տխուր տխուր դիշերային ժամերը Սահառիկոյ Յոգւոյն վերայ հետքերը ձգելով կաւահէին. իսկ Սանդուխտ առաքելոյն առաջ խոնարհեալ՝ Հայաստանի միաւոր փառաց նոր առաւօտ կծագէր: — Անմահ առաւօտ, որ ծագեցար ի Հաւարշան, և լուսաւորեցար յԵրուսաղէմ:

Եւ առաւօտեան լուսոյ երկնային գոյները բացուելով առաջին ճառագայթը Մահակայ սարը ոսկեզօծելով կուսաւորէր Հաւարշանու պարտէզը: — Թագաւորը եկաւ դահը բազմեցաւ, և հրաման արաւ որ նախարարք և իշխանք իրեն ներկայանան. ուրախ և զուարթ է, որովհետև թագաւորութիւնը վրդովելու պատճառ չկար, խաղաղութիւնը թէևերը բացած աշխարհը կըզրկէր, և կկարծէր թէ խռովարար Պաղեստինացին աքսորուած՝ ժողովուրդը նորա քարոզութիւնները մոռցեր էին: Բայց այն ծերունին կրկին երևցաւ, Հաւարշանու մէջ կքալէ, և բազմութիւնը զինքը շրջապատած ունկնդիր է, և ամենուն բերնէն այս կլսուէր, «Մեծ է Պաղեստինացւոյն Սատուածը և ճշմարիտ»: — Հետզհետէ ժողովուրդը զիջուեցաւ և ազատակը շատցաւ, և չորս կողմէն կըվազէին կուգային զծերունին տեսնել:

Ընդարձակ արքունի հրապարակին մէջ ժողովուրդը հաւաքուած էր. իսկ Պաղեստինացին ձեռքը երկինք վերուցած այսպէս կխօսէր. — «Սատուած զրկեց զիս առ ձեզ որ իւր անունը և օրէնքները պատմեմ ձեզ. եթէ հաւատաք իրեն՝ կխոստանայ ձեզ անմահ կեանք, փառք և թագաւորութիւն»: — Ուրեմն ծերունին, և ամբոխը սկսաւ միաբերան աղաղակել, «կըհաւատանք և կընդունինք, և զինքը միայն այսուհետև ճշմարիտ Սատուած կճանչնանք»:

Մինչդեռ այս գեղեցիկ վիպութեան համար ծերունին Յոգւով հրճուացեալ Սատուծոյ դոհութիւն կընծայէր, ահա սպասաւորք դահիճք հասան, յարձակեցան, գարկին և սպանեցին այնտեղ հաւատացեալներն շատերը. իսկ ինքը նոցա մէջ կանգնած կխրախուսէր, կքաջալերէր, և իւր ձեռօք Յոգիներն Սատուծոյ կուտանդէր, դահիճք գիմեցին նաև Սատուծոյ առաքելոյն վերայ, հազարաւոր սուսերք կշողան, կպատառնան և կորոտան, «Դու անօրէնն, որ յանուն Սատուծոյ քո այսչափ արիւն թափել տուիր, արժանի ես մահու»: — Բայց ահա շարժեցան երկինք, դղրդեցաւ երկիր, և միզախառն ամպ իջաւ պատից առաքելոյն չորս կողմը. շանթք, փայլատակունք որոտաձայն սկսան տեղալ, գետհուբեցան դահիճք, և ահաբեկ թողեն փախան:

Ահ և սարսափ ամենուն վերայ տիրած՝ բոլոր Հաւարշանու մէջ այս դէպքը միայն իրերաց կպատմէին, և ոչ ոք չէր իշխէր նահատակեալ սրբոյ մարմնոյ մերձենալ կամ թաղել, վասն զի թագաւորը վճիռ խնդրութեամբ բորբոքեալ՝ Պաղեստինացւոյն դէմ հրաման տուած էր անթաղ թողուլ սրբոյ մարմինը, և որ ոք ընդդէմ հրամանաց գործէր՝ մահու պիտի մեռնէր:

Ով է այդ հրաշատեսիլ տղայ հասակաւ գեղեցիկ օրիորդը. նազելով Սանատրուկ լեռնէն կիջնայ, և կուգայ սրբոյ մարմնոյ մէջ կըշրջի. ով տղերց նորա Յոգ-

ւոյն այս երկնային զթութիւնը, ո՛ տուաւ նորա այս զիւցազնական արիութիւնը. զորալով կմերձենայ սրբոց մարմնոց, կսրբէ վէրքերը և կհամբուրէ, կժողովէ նոցա արեան կաթիլները, կօծէ անուշահոտ խընկօք և իւղով, և հրաման կանէ որ թաղեն: Ահա ծունր դրաւ, բոցավառ աչքերը երկինք ուղղած՝ իրրև մարմնաւոր հրեշտակ հաւատով թևաւորեալ երկինք պիտի թռչի. և այս խօսքերը շրթունքներէն կլսուին. «Ծորուցի ամենայն փառք և հեւէդ եկայ. հաւատացի քեզ, և ըղքեզ ամեն բանէ վեր սիրեցի. զօրացուր զիս Տէր, և արժանի արա որ արիւնս ալ սիրոյդ համար նուիրեմ»:

Թագաւորին ականջն հասաւ, կորոտայ, կմռնչէ, կըփրփրայ, կծփայ. «Ով է այն, որ այն յանդուգն որ իշխեց ինձ դէմ ելլել և հրամանս անարգել. որ անզգամը զիմաց, որ անօրէնը թաղեց»:—Բայց ոչ ոք կրնայ պատասխանել:—Սակայն թագաւորին զայրոյթը առաւել և կորրորքի. ահարկու աչքերը նախատարաց վերայ ձգած՝ աւելի ահեղ ձայնիւ կգոչէ.—«Երդուեալ յանուն Աբրամադայ, այսօր այն խաբեբայ Պաղեստինացին և նորա զօրքակից ղոհ պիտի մատչին հաստուածոց, բայց դուք զիտէք, պատմեցէք, յայտնեցէք ինձ անօրէնը»:

Մինչդեռ այսպէս խոոված կասկածներով կտանջուէր, ահա թագաւորին ղըրկուած զօրականը դարձաւ. Անհատրուկ երեսը նայածին պէս կասկածները շատցան, կատաղութիւնը կամաց կամաց մարիլ սկսաւ, տկարացաւ, նուաղեցաւ. «Ո՛վ դիք, ւրնչ կլինիմ, գոչեց յուսաբեկ. ուսաո՛ է ինձ այս տարօրինակ սրտի բաբախումը և հոգւոյ խռովութիւնը»:—Եւ դարձաւ զօրականին, «խօսէ, մի՛ ծածկեր, գիտես դու զայն, պատմէ թէ ո՞է, ւրնչ է անունը, ո՞ւր է յանգաւորը, ո՞ւր է Պաղեստինացին»:

Զօրականը ահաբեկ յառաջ անցաւ, և այսպէս խօսիլ սկսաւ. «Պաղեստինացին ծանրապինդ շղթայիւք կաշկանդեալ և բանդ մահու դատապարտեալ է, և ժամէ ի ժամ մահուան դատակնիքը կսպասէ լսել»:—«Իսկ յանգաւորը» կրկնեց թագաւորը. բայց զօրականը խօսքը ընդհատեց և դողալ սկսաւ:—«Դուք ամենքնիդ թշնամի դաւաճան է.ք ինձ, դոչեց թագաւորը. այսպէս կհնազանդիք ինձ, այս է հաւատարմութիւննիդ առ թագաւորն ձեր. դուք Պաղեստինացւոյն գործակիցները է.ք, դուք զիտէ.ք կճանչնաք յանգաւորը և ինձմէ կպահէ.ք»:—Թագաւորին բարկութենէն զօրականը սոսկալ, «Աստուածդ խնայեսյ», ասաց, բայց խօսքը չկրնալով շարունակել՝ դարձեալ լռեց:—Մեծ էր թագաւորին սրտին խռովութիւնը և տագնապը, չար գուշակութիւնք և կասկածք հոգին կկեղէքէին, և դարձաւ զօրականին, «Ով է, ասաց, յանգաւորը՝ որ չես համարձակիր յայտնել ինձ. եթէ իմ սիրելի իշխաններէս և զօրավարներէս լինի՝ հրաման է քեզ, յայտնէ անվրկիւզ»: Եյն ատեն զօրականը սրտապնդեալ ասաց. «Ժողովուրդը կխնայէր և ես լսեցի».—«Ո՞նչ».—«Օրիորդին համար».—«Ինչպէ՞ն օրիորդ».—«Վրիատոնեայ».—«Ուստի՞, և որո՞յ աշակերտ».—«Պաղեստինացւոյն, և թագաւորին սիրելի»—«Իմ սիրելիս, անհնա՞նը».—«Անդուխտ»:—«Ո՛վ դիք, Սան-

դուխտ իմ ազջկա, ի՞նչ կլսեմ» . . . — հապճեպ այս խօսքերը Թագաւորին շրթունքէն Թռաւ՝ կայծակնահար նուաղեցաւ՝ դալկացաւ, յուսահատ և անմխիթար դահին վերայ ընկաւ հառաչել սկսաւ:

Երեկոյեան պահերն էին, բանտին ղեկները բացուեցան, նախ գահճապետը սուրը ձեռքը դուրս ելաւ, եւեւէն դահիճք, ետքէն վերջը Պաղեստինացին շղթայակապ, յաջ և յահեակ դահիճք կինքը բոլորած. քիչ մը հեռուէն հաւատացելոց խումբը կերթար՝ որոյ ինքը Սանդուխտ կառաջնորդէր. Թագաւորին ապարանքը կերթան. բայց ծանր են շղթայք, ձերունին չկրնար կրել, հապճեպ քայլերը փոխել. սակայն ուրախ և զուարթ է, իբրև յաղթական որ ճոխ աւարներով արշաւանքէ կդառնայ, այնպէս նաև Պաղեստինացին հաւատացելոց բազմութիւնը եւեւէն՝ Թագաւորին կերթար:

Ա՛օտեցան ապարանից, Թագաւորին աչքին զարկաւ Սանդուխտ, լսեց ձայնը որ հաւատացելոց կգոչէր, «Ո՛օրացէ՛ք, մի՛ վհատիք» . — մրրկայոյզ ամպերէն Թռած շանթը այնչափ շուտ չերկիր չհասնիր՝ որչափ շուտ հասաւ զարկաւ այս ձայնը Թագաւորին սրտին. երեցաւ, հրկեցաւ, աչքերէն հուր և ծուխ կելլէր, իսկ շրթունքներէն մահուան հրամաններ կթափէր: — Նկատ մնաւ Պաղեստինացին, և մկկէն Թագաւորը, ինչպէս հրաբուղ որ անդունդներէն ժայթքելով հրածորան դուրս կթափի, այնպէս ահեղաձայն որոտաց. «Անօրէն դառնացեալ ձերունի՛դ, դու իմ ցաւերուս պատճառ, դու անբուժելի հարուածեցիր սիրտս, կեանքս դառնացուցիր. աւարդ քան զԹագաւ և զաւազանս մեծ և անդին է. կզարհուրիմ ի դից, կամաչեմ ժողովրդէս, ցի՛ր ներողամիտ լինիմ քեզ: Ա՛ինչդեռ գործած ոճրիդ համար քուրմք և ժողովուրդք արիւնդ կպահանջէին՝ ես դիմացի ի քեզ, լանայեցի կենացդ, հրաման տուի որ աշխարհէս ելլես երթաս, իսկ դու տակաւին աստ այս ի՞նչ ոճիր է որ գործեցիր. յանդգնեցար ձեռդ ի գահոյս իմ կարկառել, և իմ միակ սրտիս ուրախութիւնը, գահիս փառքն ու պսակը, ժողովրդեանս Թագուհին՝ սիրելի Սանդուխտս յափշտակել, խաբել և մոլորցնել, չէ դողացիր անօրէն, չէ դիմացիր նորա Թշուառ ծնողացը: Ի՞նչ խոստացար որ կրցաւ ընդդէմ բնութեան գիս՝ իւր ծնողը ատել, և Թագաւորութեանս փառքէն հրաժարիլ. — ցաւերով և վշաերով աշխարհ լեցուցիք, և մեր Թագաւորաց ձեռքերը արեամբ ներկեցիք»: Լռեց Թագաւորը և հրաման տուաւ որ միայն զՊաղեստինացին կրկին բանտ դարձնեն:

(Ի յԵպտիոս)

ՄԿՐՏԻՉ ՊԱԼԵՆԱՑ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՆԳԱՄԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՀԱՏՏՆՈՒՄԸ։

Գ։ Ջ։ ԵՒՉԱՏԱՊԱՐԱՆՑԻՑ ՀԱՆԱՆ։

1342 ԹԻՒ, 12 ՕԳՈՍՏՈՍԻ,
ՄՈՂԱՐԹՈՒ ՆԱԽԱՎԱՅԻ ՎԱՆՔՈՒՄԸ։

(Շարունակութիւն։)

Կէս օրէնն երեք ժամ ու կէս անց էր, առաջնորդութեամբ վանահօրն գնացինք աւազանի վրայ շրջելոյ։ Անցանք Ջաղացի մօտովն դէպ ի արեւմտեան կողմն, մեզ տանիս հանդիպան հասանք աւազանի մօտն, ուր ձգած էին զորքեր և կարպետներ՝ և քանի մի հին աթոռներ շարած նոցա վրայ։ Ջրի պարզութիւնն էր զարմանալի։ Ջրս կողմն խիտ խիտ ծառերի տակի զանազան ծաղկանց բուրումն՝ և բաղերի՝ սագերի ձայնն խառն էն ջրի քչքչալուն, որ աւազանն էր լծափովում, շատ ախորժ էր լսելեաց։ Մոքերնումն դրինք էս տեղ ընթրիք անենք։ բայց փոքր ինչ անցկացաւ, թէյն երբ խմեցինք վերջացրինք, չոր քամին ցրտի հետ խառն՝ փոքր փոքր էնպէս ներգործեց մեզ, որ չկարողացանք երկար նստիլ, վերադարձանք մենաստունը։

Ուրի վանահօր մարդասիրութեամբ ընդունելուցն ինձ աւելի ախորժ թուեցաւ նրա խոշորակեաց կերակուր պատրաստել տալն։ Հանդարտօրէն Մենաստանաց միջն, երեկոյեան «Նկեսչ» աղօթից յետոյ ընթրիք կանեն, բայց երեկն մեր ճանապարհից զրկոյ համար հակառակն արին, այսօր՝ որպէս իրանց սովորութիւնն էր՝ էնպէս կերակրեցին մեզ։ Ընթրիքն էր բաղկացած ձկնեղէնից, բանջարեղէնից և թռչունների մսից, սպիտակ հայից, մօթալից, մածնից և կարագից։ Յաւ ընթրիք անելուց յետոյ, շատ նեղուցն լինդրեց իւրեանց խոշորակեաց կերակուրների համար. ընդհակառակն, որպէս ասացի, ես շատ ուրախ էի էնպիսի ընթրիքին։

Ընթրիքից յետոյ նստեցանք զրոյց տալ. — կից շատ լաւսակցութեան, բանի թէն հասաւ Մենաստանիս հնութեան վրայ, որոյ համար ասաց թէ սկզբնաւորութիւնն եղած է ի Թադէոս և Բարդուղիմէոս առաքելոց։ Ըշոտ Թադաւորի և Աբգիկ Կաթուղիկոսի պարզևագրների ըօրութեամբն, և թէ նոցա Կոնդակներն կամ հրամանագրերն գրուած Նիւ Հայոց Թուականին (976 թ, Փրկչին)՝ պահուած է թանկութեամբ էն տեղ մինչև ցայսօր։ — Ես շատ ցանկացայ տեսնել էս հնութիւններն։ — բայց Վանահայրն հաւատացրեց ինձ թէ՝ եթէ դարանուն է, չեմ կարող բանալ, նախ որ պէտք է քանի մի օր շրջել այն թղթերի միջն և ոչ գիտեմ գտնենք թէ ոչ. երկրորդ՝ եթէ մնդուկումն է կամ դրատունը, ուր ժողոված են էդպիսի հնութիւնները, նոյնպէս չեմ կարող բանալ, որովհետև բանալիքը Սարգիս եպիսկոպոս նախկին առաջնորդի մօտ կը լինէր։ Նա գնաց Նախիջևան առաջնորդ, ուր և վախճանեցաւ, և նրա ուղ և ծուռն կնքուած է Նախիջևան Էջմիածնայ Սինոդի հրամանաւ, որոյ միջն է և մեր դրատան բանալին և այլ բանները։

Էս Սարգիս վարդապետն Դաւթեան, ասութեամբ Վանահօրն, ծնած էր հին

Ջուղայ և ընծայված Մենաստանից, ուր և Վահանայութեան կարգն ստացած, յետոյ վանահայր և ապա առաջնորդ եկած 1820 թուէն ց 1840 թիւն, երբ և գնացած է Էջմիածին և առաջնորդ նշանակուած Մենաստանին և Նախիջևանու։ Սա նախ քան զվերջին պատերազմն Պարսից և Ռուսաց՝ շատ նեղութեանց և չարչարանաց է համբերած Պարսից զորձակալներէն և չորս կողմի Մահմետական կալուածատէրներէն ամէնը վանքին համար, քանի քանի անգամ Օհէրան է գնացած Ֆաթալի Շահի դուռն և հրովարտակներ ստացած։ Մինչև ցայսօր Պարսիկներն, որոնք կը ճանաչեին հանդուցելոյն, շատ գովասանութեամբ կը խօսան նորա վրայ։ Որպէս ասեց վանահայրն, մինչև իւր մահն՝ մեր չորս կողմի մահմետական երևելեաց համար Նախիջևանու պարգևներ կը ղրկէր, որպէս զի Թոյլ չտան ձեռս տալ այլոց մեր վանքին կամ կալուածոյն։

Վանքումն կային չորս վարդապետք բայ ի վանահօրէն (որոյ անունն էր Յովհաննէս), մին քահանայ, մի ժամակոչ և մին անտես իւրեանց ընտանեօքն և հինգ աշխարհական ղերդաստանք, որք կատարում են Մենաստանի վերաբերեալ ամենայն մշակութիւնքն։ Ունի ցանելոյ հողեր և քանի մի հարիւր ոչխար, եղներ և գոմիշներ վարելոյ և հերկելոյ համար։ Վարդապետներն երբեմն երբեմն կերթան նուիրակութեան Էջմ, Սալմաստ, Որմի, Նախիջևան և Ղազախս, որ տեղաց շատ ուխտաւորներ կը գան ամենայն տարի։ Որպէս ասաց, մինչև Ռուսաց պատերազմն շատ արդիւնք է ունեցած վանքն ուխտաւորներից, բայց հիմի տասն և հինգ օր արգելանոցի (կարանթինի) համար շատ նուազել է։ Ձորս կողմի Պարսիկներն ևս կգան ուխտ, մանաւանդ նրանք, որոց երեխայ չէ ծնում։ Մահմետականներն ինքեանք վկայում էին թէ, շատ կան մեր մէջն Դանդղուղլի անուամբ, ըստ որում որոնք եկած են ուխտ, որդի ծնելուց յետը՝ ծնողքն նորա անուանած են Դանդղուղլի, այս ինքն ծառայ Սուրբ Աստուածածնոյ Նախավկային. զի նոքա Սուրբ Աստուածածնոյ Նախավկային Դանդղ ՓԵՂԷՄԲԷ ասեն, այս ինքն Մարդարէ։ Վանքական կառավարութիւնն ոչ թէ Հայ, այլ և Մահմետական ուխտաւորաց կատն հայ և ամանեղէն, որքան հարկաւորի ձիանցն՝ գալի դարման։ Պարսիկք մեր թիւած հացն չեն ուտում, վասնորոյ և նրանց ալիւր կատն։ Որքան ամանեղէն կայ վանքումն՝ բոլորն էլ պղնձէից է, որք ժողոված են որդեծննդութեան համար ուխտաւորածներէն. — որդեծննդութեան ուխտաւորքն վերադառնալիս իւրեանց տունը՝ մին կամ աւելի կաթ աման կը գողանան, այսինքն ծածուկ հետերնին կառնեն, թէև անտեսն իմանայ՝ որ պակաս է, ոչ ինչ չ խօսայ։ Գողացած աման տանողն հնար ժամանակ կպահէ, որ մինչև երեխայ ծնանիլն, — երբ և մի և նոյն ծանրութեամբ երկու հատ պէտք է շինել տայ, իւր յիշատակարանը, Հայն՝ հայերէն, Թուրքն պարսկերէն, գրել տայ վրէն, ու ուղարկի կամ ինքն գալիս՝ բերէ վանքն։ Դիարկէ շատերն էլ փոխանակ մինի տեղ երկուսն բերելոյ, տասնապատիկ են բերել և թերևս էս աւելի։ Ինձ մարանումը ցոյց տուին հազարաւոր մեծամեծ պղնձէ ամաններ որ կեղօձ և հասարակ տատերով յիշատակարաններով, որոց միջին ամենագումարն

էր Աբբաս-Միրզայ Շահզատայինը, ժառանգին Ֆաթալի Շահի, և նորա որդոց Ջահանգիր և Խօսրով միրզայինն:

Որպէս ասացին՝ վերջնոյս մայրն, որ զաւակ չէր ծնում, ուխտում է Նախավկային և դալիս վանքն, վերադառնալիս ամաններէն զողանալ է տալիս տանում: Վանի մի տարից յետո ծնում է Ջահանգիր միրզին. ինքն և իւր ամուսինը՝ այս ինքն Աբբաս-Միրզայի՝ մեծամեծ պարգևօք և պղնձեղինօք դալիս են վանքն: Վանի տարուց յետո ծնում է Խօսրով-Միրզան և սրա համար էս դալիս են վանքն ուխտ: Երբ որդիքը մեծանում են, և նոքա նոյնպէս յաճախում են վանքըն: Աբբաս-Միրզէն Մայրիականու կողմերքն շատ որսորդութիւն է դալիս լինում, զարմանք չէր, այնքան հովանաւորութիւնն որ ունեցել է Սարդիս վարդապետի վրայ, որպէս լսած եմ, պատճառն այն էր, որ շատ անդամ օթևանցած լինի մենաստանումն:

Օգոստոսի 21 ին՝ մինչև իմ վեր կենալ ու ժամ գնալն, Վանահայրն առաւօտեան ժամասացութիւնն վերջացրել էր, հասայ պատարագին: Երբ վերջացաւ, դուրս եկի և Վանահայրն կէս ժամից յետն եկաւ ինձ մօտ, նստեցինք զրոյց անելոյ, մինչև նախաճաշիներս պատրաստեցաւ: Մենաստանների մէջն յայտնի է, որ օրիցն երեք ժամ անցկացած՝ կէս օրվան հայն ժամանակն է: Այսօր երեկվան վրայ հարուստ էր սեղաններնիս, այսինքն լաւաշ ձու, ձուապեղ, կաքաւի խորվածք և տարեվա ձուն աւելորդ էին: Տարեվան որպէս տեսած եմ Էյաստանցւոց հասարակ ուտելիք, դալիս է Վանիցն և որպէս ասացին, Աղթամարայ ծովակիցն է դուրս դալիս, նման է շատ ապրելայ ձկան և շատ լաւ է լինում, երբ զոլ ջրի մէջն կէս ժամչափ թրջուած են, որպէս զի աղտութիւնը դնայ, յետոյ կձխում են, մանր մանր կոտորում ածում քացախի և ձէթի մէջն ուտում՝ և ոչ թէ որպէս Էյաստանում հում կամ կրակի վրայ խորոված: Եթէ Եւրոպացիք Վան թարմ ժամանակն պատրաստեն, կարծեմ թէ լաւ էս կլինի իւրեանց սարդինայ ձկնէն:

Էյսից յետոյ մի քանի ժամ հանգստացանք: Երեկոյեան երեք ու կէս ժամ ճեացած՝ լանդրանօք վանահօրն դնացինք աւազանից ներքևն որսորդութիւն անելոյ: Ինքն վանահայրն լաւ որսորդ էր: Վանի մի տատրակ և ուրճն կաքաւ որսացինք, վերադարձանք վանքն: Այս օրվան մեր ընթրիքն, նախաճաշիկի նման, երեկվանէն շատ փարթամ էր, ըստ որում դառն էին մորթած, նորա խորովածն և կամ ծեծած միւսն տապակած էին շինած, կծախուրն վրէն շաղ տուած: Երասխի կօճայ ձուկն եղում և ջրում եփած էին, և փլաւ՝ ձաւարն ու ոլշտէն խառն, որ շատ համեղ է լինում:

Էյսից յետոյ, որպէս և երեկն, նստեց վանահայրն ղրոյց անելոյ հետս: Որսորդութեան վրայ խօսք էր բացուած և գովում էր Մաղարթայ լերան կաքաւի որսորդութիւնն. մինչ առեցի վարդն միասին գնանք, նա խօսքի թևէն կարեց, թէ լաւ կլինի եթէ կարենանք էն տեղը ձմնաւորին էս պատահել քարայրից դուրն և տեսնել դոնէ հետուանց: Մինչ հարցրի թ՞նչ ձմնաւոր է, նա պատմեց թէ, քառասուն տարի կայ՝ որ Մաղարթու սարի վրայ

մինը ձգնվում է խոստաձարակ։ Ի հարկէ խոստաձարակ ըլնէն ոչ թէ զարմանալի՝ այլ անհատատալի թուեցաւ ինձ, ուստի և ես հետաքրքիր եղայ։ Վ՚անահայրն ասեց թէ, ահա մերձ երեսուն տարի է վանքս եմ, միմիայն երկու կամ երեք անգամ եմ պատահած նրան, են էլ տարբրումն և ոչ թէ վանքումն։ Մարդու չի երևալ, ինչպես վայրենի կենդանի։ Թէ հեռուանց մարդ տեսնէ, կփախչէ։ Շամբեցի Հայերն կամ շրջակայիս Պարսիկներն և Վրաց՚ն՝ նրան կուխտեն էսպէս, եթէ խորհուրդներնին կատարվի, ձգնաւորի համար հաց կամ այլ և այլ ուտելիք տանեն։ Երբ կատարվի, կտանեն, կդնեն նորա բնակած այրի մօտ։ Հոգ չորս կողմն քարերի վրայ։ Շատ անգամ հօրմն օրից յետեն կերթան կտեսնեն ինչպես դրած են՝ ինպէս կայ։ Ծուչուններն թէ գազաններն կդան կուտեն՝ չդիտեմ։

Ի՞նչ ես ասում, Հայր սուրբ, ասացի Վ՚անահօրն, էդ ի՞նչպէս է կարելի, էդքան տարի հետամուտ չեղաք, ոչ է, ի՞նչ է անուշը, ի՞նչն է եկած, ինչո՞վ է կերակրվում, ձմեռն էն լեռան ղլխին ի՞նչպէս է ապրում։ Նորա հետ ի հարկէ մին մարդ կը լինի՝ որ հաղորդակցութիւն ունենայ, կամ թէ քրիստոնեաց է, ինչո՞ ձեր վանքն չէ գալիս աղօթելոյ ևն ևն։

Պատասխանեց Վ՚անահայրն, ինչ որ հարցնում ես, ոչ ինչ մեզ յայտնի չէ, այսքանը գիտենք, որ քառասուն տարի կայ, որ սկիզբն նրան տեսած են մեր տարիքի մարդ։ Հայ լինելոյն միտիտ ենք, քան որում Պօղոս Ծերունի վարդապետն երկու, երեք տարին մին անգամ կերթայ նրա քարայրն, կխոստովանացնէ, կհաղորդէ՝ կդայ։ Թէ նրա ոտ լինելն, ուստից գալն և կամ ինչ որ հարցնում էք՝ միայն Պօղոս Հայրն պէտք է գիտենայ, որպէս խոստովանահայր։ — Ի հարկէ նրա պարտականութիւնն էր մեզ չյայտնել։

Հարցրի, ոտ է այդ Պօղոս Հայրն, էս տեղ է, կանչենք հարցնենք։ Չէ պատասխանեց Վ՚անահայրն, Ուշ է, այսօր վարդ չունեմ՝ որ դայ։ Գլխներն, հայր սուրբ, լաւ տեղ ձգեցիր ինձ. ես հետայսոյն չեմ ձեր վանքէն, մինչև չտանես՝ երես երես չը կանգնացնես էդ ճգնաւորի հետն։ Վ՚անահայրն ասաց, կերթանք, բայց չի երևալ, և ես որ ասացի՝ կտեսնենք, այն մտօք ասի, որ մեր որսորդութեան ժամանակն թերևս դուրս եկած լինի շրջելոյ, հետուանց տեսնենք։ Վ՚երակրկնեցի, ես մինակ կերթամ կմտնեմ քարայրն։ Ինչ օգուտ, ասեց Վ՚անահայրն, նորա քարայրն, որպէս լսած եմ, չիսուն քայլ է, մուտքն շրջաններ ունի, կմտնի արջն նման մին բուն, մուտքն տեղ, որ տասն օր պտուտես՝ չես կարող գտնել։ զարմանք չէ՝ որ քարայրի մէջն սենեակների նման ճակեր ևս ունենայ. աւելի լաւ է, որ սպասենք մինչև Պօղոս Հայրն գայ, նորա խորհրդով ինչ անելոյ ես ասա, որ մին օգուտ քաղես։

Ժամը տասն լրացած էր, երբ Վ՚անահայրն յուսահատ իմ հարցմունքներէն և ես յուսահատ նորա պատասխան չտալոյն, ինձ բարի գիշեր ցանկանալով գնաց իւր խուցն քնանալ։

Ես չկարողացայ մինչև կես գիշերին երկու ժամ անգործացած քնանալ։ — մտքումս էր միայնակեաց պատմութիւնը որ լսեցի, արժանի հետաքրքրութեան։ — մտայայ Վ՚անէն և ուխտ դալս, — մտքումս դրի ան-

պատճառ տեսնել և խօսալ միայնակեացի հետը։ — Ինչ եղանակաւ ինչ հնարքով քառասուն տարի մին քարանցաւում կենալ. մին մարդոց հետ յարաբերութիւն չունենալ — ինչի՞ — էս ամենն էր իմ մըտածմունքն, որը Թոյլ չտուին քնանալ։

Մ՚իւս օրն, որ 22-ն էր Օգոստոսի, շատ ուշ զարթեցայ, համարեա վանականաց նախաճաշիկի ժամանակին էր, որովհետեւ հինց երեսս լուացայ հագուեցայ, մին մոնթ եկաւ Թէ հայր սուրբն ասում է՝ համեցէք հացի։ Ես եւս գուրս եկայ, մնայ սեղանատունը, որ ամենն՝ բաց ի ինձանէ՝ պատրաստ էին։ Վ՚անահայրն ներսումն խնդրեց, որ ինձ էնպէս ընդդէմ իմ սովորութեան շուտով հայի է հրաւիրել, և պատճառն այն է, ասեց, էսօր մեք հարիսայ ունիմք, Թէ ուշանայ՝ համն կկորցնէ։ Հարիսայ բառն, ասացի, դիտեմ հայր, Հայերէն է, ըստ որում երեկոյեցն կրակի վրայ են դնում, և մինչև առաւօտըն հարում են շերեփով.— հարկաւեմ կամ հարեմ բառերիցն է կրճատած։ Վ՚անահայրն ծիծաղելով, ասաց, դէ էդ էր պատճառն որ ձեզ ապրպային կերակրով եմ ուզում էսօր հշտացնել։ Ես շատ կերայ հարիսեցն. յետոյ տեսնեմ տուին Ընթացքն բռնած լաւ կապուտ ձուկն և կաքաւներից լաւ խորոված՝ներ երկու կերպ, և կանաչեղենից Թեթև մարսելի քանի մի կերակուրներ։

Հացից յետոյ վանահայրն ինձ Թոյլ չտուաւ քնանալոյ, ասաց դնանք գուրս համ կալերին նայինք, համ էլ փոքր ինչ կշրջինք և ծառերի տակին ուր կուզես՝ կարպետ, զորդ բերել կտանք, մին տեղ կընստինք կհանգստանանք։ Մ՚ին շատ լաւ տեղ, խիտ խիտ ծառերի տակն, փռոյք ներ ձգել տուեց, ուր քնեցինք փոքր ինչ. վերկացանք սառը առուի ջրովն երեսներնիս լուացանք, բերին լաւ սեխ, ձմերուկ, ծիրան, շլոր, կարմիր և մեծ խնծոր, ամենն էլ իւրեանց պարտէզներից։

Ես տեղից վերադարձանք վանքն. ուր մին մին գաւաթ Թէյ էինք խմած, և ահա ներս մտաւ մին ալեզարդ ծերունի, համարեա եօթանասուն ամաց, երեսն կնճռոտած, բայց կերպարանքն գուարթ և պարզ,— յօնքերն և մօրուսն ձեպ ձերմակ ինչպէս ձիւն, հասակն երկար, բայց վոխտ, ձեռքին սև ապտնողից գաւազան։ Յարգութեամբ ողջունելով, ուշադրութեամբ երեսիս սկսեց նայել։ Սա է, ասաց ինձ վանահայրն, Պօղոս Հայրն, ամենից ձեր և հին մեր վանքի միաբանն, որոյ մասին երեկն ձեզ ասում էի Թէ ճգնաւորի խոստովանահայրն է։ Վ՚երկացայ ձեռքն համբուրեցի և խնդրեցի նստել մօտս։ Ծարի ծերունին այնպէս մարդասիրութիւն ցոյց տուաւ ինձ, որպէս Թէ քանի տարի է հետս ծանօթ է, Թէև ասաց, երեսդ չեմ տեսած, բայց ծնողացդ՝ եղբարդդ հետ մօտ ծանօթութիւն եմ ունեցել, և քո անունդ շատ լսած։ ուրեմն իրաւունք ունիմ ասելն ես մերձ ինձ, քեզ և քեզ, ինձ համարել։ Վ՚անի մի րոպէի զրուցից յետոյ, իմ խնդրանօք սկսեց պատմել, Թէ ուրն ամեայ նուիրուած է եղած մենաստանիս, քանի քանի տարուց յետոյ դնացել է սուրբ Էջմիածին, էն տեղու միաբան դառել. մեծ Մ՚ինաս արքեպիսկոպոս տեղապահի հետ շատ տեղրանք նուիրակութիւն շրջել. երեսուն տարեկան եղած վերադարձել է վանքս և տեղոյս միաբան,

նուիրեան կարդն կրկին մտել, ուր և կայ մինչ ցայսօր:

- Ըստ որում Ծերունւոյ խօսակցութիւնը շատ ձոռոմ՝ ուրախ էր, վասն որոյ և ես ամեն մին առարկայ բաց անելով՝ հարցմունքով՝ միջոց կի տալս երկարօրէն և տեղն ի տեղն պատմէ: Ծերունւոյ հնութեանց տեղն ի տեղն ախտանատես պատմութիւնները՝ այնքան քաղցր էին ինձ լսելոյ, որ ընթրիքն արինք, և մինչև կէս գիշեր, միմիայն նա իւր խօսակցութեամբը մեզ զբաղեցրեց: Երկարօրէն ձառեց Սիմէօն կաթուղիկոսի վերջն տարիքը, Գուկաս կաթուղիկոսի կեանքը, Յովսէփ անուանեալ կաթուղիկոսի յառաջանալը և նորա ներդործութիւնը, — Դանիէլ և Դաւիթ կաթուղիկոսաց հակառակաթոռ տարաձայնութիւնը - այնքան մեծ դումար դրամոյ նոցա մսխելը և կաշառք տալը Պարսիկ և Տաճիկ կողմնակալաց, — նոցա միմիկու դուբա անելը աթոռոյն և քանտարկումը, քանի՛ քանի՛ անգամ յառնելը Պարսից կամ Տաճկաց՝ անթիւ զօրօք միաեանց վրայ Հայաստանի մէջն, — աւերումն և քանդումն վանօրէից, քաղաքաց և գիւղօրէից և այլն և այլն: Ի վերջոյ խոստացաւ ինձ տալ — ելը լմնցաւ հետաքրքիր եմ — ջրոս հարիւրապատի կոնդակ՝ ողջունադիրք կաթուղիկոսաց և երեսփի վարդապետաց — մահտեսիք բազմանիւնիք, վիճականք և այլ և այլ նիւթեր պատմութեանց, որոնք որ ասեց, ի տիրացութենէս անտի ժողոված պահած եմ:

Սորա այնքան երկար և ախորժ խօսակցութեանը թէ և զմայլած էի, այսու ամենայնիւ չէի մոռացած Աղարթոս միայնակեցի պատմութիւնը սրտանէ լսել: Ի վերջոյ խօսք բաց արի նորա վրայ և խնդրեցի ինձ տեղեկութիւններ տայ, եթէ միայնակեցէն է լսած կամ ուրիշից:

Պատասխանեց Ծերունի հայրը, որպէս ասես վանահայրը արդէն պատրաստ է քեզ, որ միայնակեացն իբր երբեմն երբեմն ինձ հետ յարակցութիւն ունի, և այն միմիայն հոգևորական պաշտօնին վերաբերեալ կարգաց վրայ է: Բայց - քանի հինդ տարի յառաջ մի անգամ վիճաբերան խնդրեցի որ պատմէ ինձ ուր տեղացի լինելն և ի՞նչ է անունը, կամ պատճառը ի՞նչ է որ մեր միաբանութեան հետ վանքումը չէ մնում և ինչի՞ է նա ընդհէպ խստութեամբ ձգնըվում: Ա՛խայնակեացը ոչ թէ պատասխան չտուեց, այլև նշմարեցի կերպարանքէն, շատ դժուարն եկաւ, վասն որոյ և այնուհետև ես հետաքրքիր չեմ եղած: Նստիլ մեր կենալուցը այն անշուք քարանձաւումն, կամ խօսակցութենէ և կերպարանքէն երևում է, կրկնեց Պօղոս հայրն, պէտք է երևելի աղգատոհմից լինի և զարմանք չէ, նրան մի մեծ թշուառութիւն պատահած է, որ եկած անձանօթ կերպիւ՝ էն լերանց միջէն մին ամայի և մռայլն քարանցաւը, իրան համար բնակարան է ընտրած ու էն տեղ այնքան երկար ժամանակ ձգնվում է: Ես բնական է ամեն վշտակիր մտհկանացու, շարունակեց Պօղոս հայրը, որ անբընակ տեղրանք քաշուելով, միայնակ մնալով, կարծումեն, և կարելի է էնպէս ևս ղղում լինին, բնակութեան անդորրութեամբը կարողանում են հանդարտացնել իւրեանց հոգւոյ և խղճմտանաց վըրդովմունքը:

Ա՛յդ հասկանալով Պօղոս Հօր խօսքը, կարելի՛ է միասին վաղը գնանք նրան տեսնենք, ասեցի:

Ինձ լեցի, պատասխանեց նա, թէ քեզ նա երևայ։

Ներթամ, ասեցի ես, կմոռեմ նորա քարանձաւը, կաղաչեմ, կլամ կարտասուեմ . . . . . ։

Ո՞նչ ես կարծում, կրկնեց նա, մի՞թէ մեզ որ տեսնէ նա, թէ ուզում ենք մրատնել քարանձաւը՝ կմնայ հնաեղ,— քանի լեցի, դուրս կերթայ կփախչէ ինչպէս այծեմըն, կամ թէ այնքան մուխն է նրա քարայրը, ուր քան մարդ ծածկվի՝ անհնար է նրանց գտնելն։

Ես էս ասեցի, կվազեմ յետևէն, կհասնիմ կբռնեմ, կաղաչեմ։ . . . .

Ո՛չ թէ դու, պատասխանեց հայրն, այլ և այծենիք կարծեմ չեն կարող նրա յետևէն էն քարերի, էն քերցերի միջը հասնել։

Հայր սուրբ ասեցի, մինչև չտեսնեմ միայնակեցին, քանի լինի թէ գնամ ձեր վանքից։ — դարձեալ դու կխմանաս սրա հնարքն, խնդրում եմ, մին հնարք մտածես, որ կարողանամ նրա հետ գոնէ տասն րոպէաչափ խօսիմ կամ տեսութիւն առնեմ, այնուհետև ես գնամ։—մտածէ հայր սուրբ, մտածէ հնարք։

Ակսեց Պօղոս հայրն փոքր ինչ մտածմանց մէջը մտնել, և ապա շարունակեց. որդի, ես սրտով կցանկամ ձեր խնդիրքը և բարի ցանկութիւնը կատարել, բայց տեսնում եմ՝ անկարելի բան է առաջարկութիւնդ . . . ինչ հնարք մտածեմ, ես էս չգիտեմ . . . այսու ամենայնիւ կէս գիշեր է, ես էս հանդստանալ կուզեմ, շատ ձանապարհ եմ քալած ոտնով . . . գնանք, քնենք, տեսնենք Աստուած ինչ միտք և խելք է տալիս մեզ մինչև վաղն։ Ասեց և ոտի կանգնեց։

Այնքան լինի, հայր սուրբ, ասացի, որ նրան ու ինձ երես երեսի կանդնացնես, այնուհետև ես գիտեմ ինչպէս կխօսեմ նորա հետը։

Ուրեմն, պատասխանեց Պօղոս հայրն, մին բան է, կը փորձենք, կլինի շատ լաւ, թէ ոչ՝ մին վնաս չունինք։ Առաւօտը շատ շուտով, ինչպէս որ լոյսը նոր բացվում լինի, վերկաց, կգամ, միասին գնանք. որովհետև հեռի է և դժուար ելանելի արեգակի ջերմութիւնից բարձր սարի գլուխն. և էն տեղ կաշխատիմ մին կերպով թիւրևս միաւանց հանդիպիլք, այնուհետև ինչպէս աստւած ես, դու գիտես՝ ինչ կանես ապա։ Նարի գիշեր ցանկանալով Պօղոս հայրը և միւսները՝ գնացին, և ես իսկ և իսկ պառկեցի քնանալ։

Առաւօտեան, Օգոստոսի 23, լոյսն էր բացուած Պօղոս հայրն ինձ զարթուցիչ։ Պատիտաելի ձերունին, այժմ ուրիշ կերպ էր հագուած, - մին ուրիշ գաւազան ձեռքին, ուրքերումը կարմիր կօշիկներ, աշխարհականի գդակ գլխին, գատարկանով հացը քամակին կապած, - ես էս վռազ հագայ որսորդական շորերս, տոպրակը ձրգեցի վրաս, հրացանս առի, դուրս եկինք։ — մինչ ինձ հետ եկած ձիաւորներն, երեկվանից մնաս բարով էին արած հետս, որ գնան Մ՝ակուի կողմն, իբրևանց ծառայութիւնն կատարեն՝ վերադառնան վանքն, էլ միասին գնանք Ջուղու կարանթինն, ըստ որում՝ միաւնակեցի պատմութիւնն լսելով՝ մտադիր էի քանի մի օր կենալ էնտեղ.— սոյա հետ կրկին մնաս և գնաս բարով անելով, հեռացանք միմեանցից, նորա վայր դէպ ի Ներսէն և ես Պօղոս վարդապետի հետը դէպ ի վեր Մ՝աղարբ

Թուր լերինքն դնալով։ Վանքիցը քիչ հեռացանք, երեսներնիս դէպ ի հարաւակողմն, խօսալով բարձրացանք ի վեր՝ երբ և արեգակն հսկայաձև ելանում էր՝ բարձրանում որպէս թէ Մաղարթայ լերան գագաթի վրայ բազմած է։

Ակն ժամաչափ դնացինք, Պօղոս Հայրն ասեց, դիտես ինչ կայ, ես էս աջակողմիցը կերթամ, իսկ դու էգ ձախակողմիցը կը գնաս. տես, ահա էն մեծ ժայռը սարի վրայ երբ կհասնես գագաթի մօտերքն, նայէ դէպ ի վայր, եթէ ինձ քերցերի վրայ նշմարես, արի դէպ առ իս, իսկ թէ չկարողանաս տեսնել, հրացանդ դարտակէ երկու անգամ միմեանց վրայ, - ես նորա ձայնն լսէում պէս՝ ուրախ կը գամ ճգնաւորի քարանձաւէն իբր նայելոյ համար թէ էս ոմ էր գամ ի՞նչ հրայանի ձայն էր, նրան նամ ձգելոյ համար, որ մին կերպով պատմեմ քոյ վանքումը լինելն, և էն էլ էնպիսի ոճով, որ գոնէ քիչ ամաչի ընդվզմանալոյ և չփախչի. և կամ թէ փախչէ էլ, զարձեալ փոքր ի շատէ առաջուց վտիտացած կը լինի, ինչ և իցէ, տեսնենք Աստուած ինչ խելք և միտք է տալիս ինձ, որ նրա հետը խօսելիս՝ սիրելը որպէս սկսեմ։

Սեպտեմբեր ահագին լերան բարձրութիւնը յառաջս եկաւ, որ ներքեւիցն նայելիս այնքան զգալի չէր, - էն կողմի էս կողմի մանր մունր այրերը, որոնք ժայռերի պատառուածներու մեծ փորուածք էին, - մեծամեծ քարանդաւները, անտաշ քարափները, խորդ ու բորդ մանր ձորերը - սրտիկ սրտիկ քարերը -, ինձ կը յուսահատացնէին, եթէ միայնակեաց տեսութեան յոյսը ինձ չէր քաջալերած։ Ամեն քայլուրս ոտքերս սպառուում էին, բոլոր լեռան անասպատ ամայի, բայ ի ոտներիցս քայլափոխներէն, և օդի հանդարտութենից արձագանդներէն, ուրիշ ձայն չէր լսւում, որք ահ-երկիւղ էին բերում ինձ էս անծանօթ ձորերումը։ Աջականերնը աջ-ահեակ լիքը կղկղում էին, և գանազան տեսակ ճնճղուկներն, որք ճուռուղելով վայրենի, լիրկ, ցանցառ քարերի ծայրերին նստած էին, դիզեցիկ լիմն տեսարան էին ելեւում աչքումս։ Ընթենիք երամ երամ, որ ինձ ոչնչի տեղ չէին հաշվում, անկիւղ արձանացած ատ և անդ ինձ էին նայում։ - Համարեա սիրտս ճաքվում էր՝ թէ ինչի՞ անհամբեր եմ ես եղած, և չեմ կարում զսպել ինձ, փոքր ինչ սպասել, դանդնել, շունչ առնել ու հրացանս ուղղել նորա մինի վրայ ու ձգել։ Մտքումս միայնակեացը և նրա քարայրը էի երեւակայում, նրա հետ էի որպէս թէ խօսում, խօսքեր, առարկաներ էի ընտրում նրան ասել, պատմել, համոզել որ հետս խօսայ դոնէ երկու բերան։

Վանի մի անգամ քերցերի վրայ նստեցայ, հանդստացայ բոպէչափ և վերստին վերկացայ շարունակելի ճանապարհս։ Ժամն ուղիղ էր, հաղիւ հաղ կարողացայ հասնել մեծ յուսահատութեամբ նշանակեալ ժայռի մօտը, ուստի աչքերս դէս դէն ձգեցի, և ո՛չ ոք չերեւեցաւ։ Երկու անգամ հրացանս միմեանց վրայ դատարկեցի, լերան արձագանքն այնպէս թնդաց, որ և ես իմ հրացանիս ձայնէն սարսափեցայ։ Մին էլ նայիմ, որ Պօղոս Հայրը դուրս եկաւ մին քերցի վրայ կանդնեցաւ, և զգաղկը ձեռն առած, սկսաւ դէպ ինձ շարժել, իւրեան ինձ ցոյց տալոյ և կանչելոյ համար դէպ առ ինքն գնալ։ Ես ևս զգա-

կով պատասխանելով նրան՝ ցոյց տուի թէ գալես եմ։ Ես քարից էն քարի վրայ թռչելով, վեր ընկնելով և կանգնելով, կէս ժամէն աւելի թերևս տևեց. ականջն ձէնի տեղ հէնց մտեցայ, պատահեցայ մին ականակիտ աղբիւրի, որն որ կարծես թէ բընութիւնը բղխացնում է միայն ձգնաւորի համար, կատարած ձեռներս և երեսս լուանալ էն սառը ջրովը. Պօղոս հայրը վերըսալին դուրս եկաւ քարանձաւէն, կանգնեց մին քերցի վրայ, իսկ և իսկ երբ ինձ տեսաւ՝ վայր իջաւ քարի վրէից, և ներս գնաց քարայրն. քանի մի րոպէ անցկացաւ, վերստին դուրս եկաւ, ինձ բարևեց բարձր ձէնով, յետոյ թէ էս տեղրանք ի՞նչ ես շինում, որպէս թէ չդիտէ գալստեանս պատճառն։ Ես էս բարձր ձէնով պատասխանեցի, որ ծորդութեան համար էի եկած, դու էտ տեղրանք ի՞նչ ես անում, երեկ դիշերն վանքումը միասին էինք, ի՞րը եկիր։ Ըրի՛, արի՛ որդի, պատասխանեց նա, էս տեղ մին բարի ծեր ձգնաւոր կայ, որ խոստովանահայրն ես եմ, երկու տարի կար՝ չէի տեսած և լուր էլ չունէի ոչ և թէ հիւանդ է, պարտականութիւնս ինձ ստիպեց՝ այսօր առաւօտեան շուտով դուրս գալ և տեսնել սորան և այցելութիւն անել։ Հը՛, կենդանի դամի, հարցըրի։ Թէև վոչը ինչ տկարութիւն ունի՝ կրկնեց Պօղոս հայրն, և այն էլ ծերութիւնից է կամ՝ անուռաղութիւնից, այսու ամենայնիւ էնպիսի առողջ կազմուածքի տէր է, որ երկուսիս վրայ էս աշխոյժ է, - արի՛, արի՛, դու էս սուրբ հօր օրհնէքըն առ։ Ասեց և ներս գնաց քարանձաւը։

Ես էս շուտով ներս մտայ քարայրը հետևելով Պօղոս վարդապետին. բայց աչքումս մարդ չերևաց, թէև երկու անգամ բարի ողջոյն կրկնեցի։ Պօղոս վարդապետը վեր առաւ, եղբայր, սա լաւ հայ է, հէնց տեղիդ վերկացար փախար, ո՞ւր էդ մնացիր տեղն մնար, դուրս ել էս օտարականին օրհնէ։

Վ՚անի մի անգամ Պօղոս վարդապետը կրկնեց էս խօսքերն, բայց միայնակեացն ոչինչ պատասխան չտուեց։ Վ՚երջը մնացը տեղիցը բարակ ձայն եկաւ, թէ ի՞նչ ես ուզում ինձանէ Պօղոս վարդապե՛տ, բաւական չէի՞ր դորան ներս բերիր ընդդէմ իմ կամացն, հիմի պատասխանն էլ ես ուզում ինձանէ, մի՞թէ չես դիտում ես հրնաժարուած եմ մարդից. . . իսկ դու բարի օտարականդ, յետ դարձիր, յետ դարձիր գնա ուստի եկած ես, մի՛, մի՛ լինիր վերջին կենաց օրերումն պատճառ երդմնազանցութեանս. - թէ ունիս բարի խրճիտանք, ինչպէս առանց խնդրելոյ շնորհ ես բերած, էնպէս էլ շնորհ տար էս տեղայ և թոյլ տուր ինձ հանդարտ և խաղաղ հոգիս աւանդել։

Ես միայն էր ինձ հարկաւոր։ Պատճառ տուեց միայնակեացն ղրոյցս ուղղել դէպ ի նա, վասն որոյ և ձեռօքս հուպ տուի հայր Պօղոսին մունջ կենալ, որ կամենում էր պատասխանել։ Ո՛ղնաւոր հայր սուրբ, ասեցի, մի՞թէ էդքան հիւրասեաց պէտք է լինի մին միայնակեաց, ամենայն նահապետք և սուրբ հարք եկեղեցւոյ՝ հիւրընկալութեամբ են Աստուծոյ հաճոյացել և դու ուստից առիր օրինակդ - մի՞թէ Աստուծոյ հաճելի է էդպիսի ուխտաւորութիւնը, որ առանց նպատակի է և ընդդէմ օրինաց Բարձրեին և մարդկութեան։ Խնդրեմ, խնդրեմ, վերադարձիր տեղումդ պառկիր և մի

արտաքսեր քարանձաւէդ օտարականիս, որ շրջելով էաքան անմատչելի քարափներըն, եկել է մտել էս տեղ և բաղդատութեամբ քեղ է պատահել ու ցանկանում է միայն օրհնութիւնդ ժառանգել։

Երկու բոլհաչափ որպէս վէր երկնքեանս, նոյնպէս և նա լուռ ծնկիկ կեցաղաղ յետոյ, վերատաւ միայնակեացը. օտարականդ բարի, սխալուում ես դու, առանց նպատակի չէ .... ուխտիս նպատակն է տանջել մահկանացու մարմինս աշխարհի վայելչութեանէս, և էս ոչընչով չէ կարելի կատարել, միայն թէ հեռանալով մահկանացուից և չունենալով նոցա հետը յարակցութիւն։

Ուրեմն, պատասխանեցի, Ասուած ամենադէան ինչի՞ ստեղծեց մարդս ընկերութեամբ. ինձ պարտականութիւն չեմ համարում առարկայիս վրայ երկար խօսալը ձեզ հետ, միայն էաքան եմ համարձակվում ասելը, որ էդպիսի ուխտաղրութիւնը ընդունելի չէ Ասուծոյ, և մանաւանդ հիւրասեաց լինելն ասելի է նորա ողորմածութեանը։

Էսպիսի ուխտաղրութիւնը, կրկնեց նա, սուրբ է առաջի Ասուծոյ, առաջի հրեշտակաց նորա, առաջի ամենայն սրբոց նորա և առաջի ամենայն մարդկան. - քանի լոյն էի էն, ես հիւրասեաց լինիմ - հիւր ես դու Ասուծոյ և ոչ իմն։ Դուռ .... դու, բարեկամ, թէ կարելի է՝ լռելեայն առանց նեղանալոյ ելանել աստի և գնալ որտեղութիւնդ շարունակել։ Վերջանէ ոչ ոք խրատ չէ խնդրում։ Էս վերջին խօսքերն էնպէս ազդու և զգալի արտաբերեց, որպէս թէ բարկութիւնիցը լաւն էր ուզում։

Վրանի բոլհաչափ խոր լռութիւնից յետոյ, Պօղոս հայրն, իմ նշանաւոր նեղվելը, ներս գնաց միայնակեացի մօտը. - ասես, հայր սուրբ, մինէ ձշմարիտ քրիստոնեի վայել է էդպիսի եղանակաւ վարվելն մին օտար հիւրի հետ. խնդրեմ եղբայր, վեր կաց արի տեղումդ պարկիր խնդրեմ խօսքս չկտրել, արի. արի և դու պարոն Վ., արի միասին խնդրենք դոնե երկուսիս խօսքը պատուէ։ Ասեց ու կռնիցը բռնեց։ Նա էս իսկ և իսկ գնացի մոտ մուրը տեղումը զայ նրանց ձէնների վրայ, միս կռնիցն էլ ես բռնեցի. փոքր ինչ միայնակեացը ընդդիմացաւ մեզ. յետոյ փոքր փոքր փափկեց մեր աղաչելոյ և զանազան յորդորանքներ առաջարկելոյ վրայ, վերկացաւ դողդոջուն ոտներով, անհանդարտ և անկօր քայլերով եկաւ կամաց կամաց տեղումը պարկեց լուռ ու մունջ, ղլուխը ցածր ձգած։ Երևում էր որ նրա սրտի մէջը մին ախրած էր տիրած։

Մինչ միայնակեացը էն վէճակումն էր աչքերս, որ նոր նոր էր սկսել բան չկել լուս տեղերը մուրը տեղ մտնելոյ համար, - այս կողմը այն կողմը չուելի տեղ նել նրա կեցութեան ձևերութիւնը և քարայրի զարդ. - ինչ. - լերկ մերկ քարեր բնական որմունքը - մռնջերը քաշ ընկած փէսի մսիցը, որ իսկ և իսկ մէջ տեղ դեռ եւս մնում էր այն տաք եղանակին. - է, երկու ոտնաչափ բարձրութեամբ քարերից շարածի վերայ սրա եւ նրա վրայ հա կարպետ, փռած բարձր եւ հնոտած կեղ. Ասուած տուր կողինքը Յօյու չմիյ. - երկու կեղտոտ կաղմով դիրք բարձի վրայ եւ մին չ բարձի տակին, որոյ ծայրն էր երևում

անկիւնումը չորս ցուպ ջոկ ջոկ փէտից նախշած, պատիլը քաշուած հայի ծոպրակ եւ մին ղոյզ տրեխ, միւս անկիւնումը դրած երկու կրեղան, մին կճուճ, մին կուժ իւր կուլովը եւ պուվեկովը, եւ մին պռատ բիւրեղ. էտունք էին նորա զեղնուխեան նշաններն եւ տան զարդքը:

Ա՛իայնակեացն էս միջոցումն մին ք անի անդամ պարկեց, վերկացաւ, տեղումը դէս ու դէն շուռ եկաւ, միշտ տէր ողորմեա, տէր ողորմեա կրկնելով: Նա յանկարծ ձեռքը բռնեցի, ուզեցի աչքն համբուրել: Օհ, ի՛նչպէս զայրացաւ էսաուր վրայ, տեղիցը վեր թռաւ յանկարծ, ուզեց ներս փախչիլ, բայց մեք երկու կողմիցը բռնելով՝ հազիւ կարողացանք արգելել: Ե՛ւ ես մեղայ, մեղայ ասելով, Պօղոս հօր աչքով արի՝ ուժով տեղումը պարկեցրինք: Երկար ժամանակ զլուխը ձեռքի վրայ կռթնացրած, որպէս թէ խոր մտածմանց մէջն է, քարացած նստած էր. և յետոյ վերառաւ, թէ կարելի՛ է՝ աչքերը դէպ ի կուրչն չռելով. եթէ կարելի է Պօղոս վարպապե՛տ էն ջրիցն: Պօղոս վարպապետն իմացաւ՝ ջուր է ուզում, վերկացաւ կուրչն տարաւ ու հանեց աւազ. Երբ միայնակեացը կուշտ խմեց, գլխով շնորհակալութիւն արեց ու մնաը դրեց, զարհնալ աչքերը վայր ձգած, թմրած, որպէս թէ կէս քուն կէս զարթուն է, յանկարծ վերառաւ, որուն ես երբէք չէի սպասում.— ինչո՞ւ կարող եմ պատուել ձեզ եղբայրք. ձշմարիտ է հիւր է ք Աստուծոյ, ընդունեցէ՛ք մեզ աւրէս էն՝ մինչ որ ունիմ, ահա խնդրեմ վայելէ՛ք՝ մինչ որ ջերմեռանդ ուխտաւորները բերած են ինձ համար: Նա ասելով ձեռը տարաւ բարձի տակիցը մին տոպրակ հանեց, բայց արտաւ, առաջներուս դրեց: Ա՛իջնի կայինն աղանձած կտուտահատ, կանէփի սերմին, քունջութ, սև մեղուշ ու չամիչ՝ խառն: Ա՛ղնաւոր հայր, ասեցի ես, ինձ միայն ձեր օրհնութիւնն է ցանկալի, իհարկէ նրանէ աւելի ինչ շնորհ անէ՛ք՝ անպին և պաշտելի է ինձ: Ահեցինք փոքր փոքր չաբաթ անել. իսկ նա վիզն ծռած՝ մեղ նայում էր աչքի տակովը:

(Ի յետոյ).

ԳԱԼՕՒՍՏ ՇԻՐՄԱԶԱՆԵԱՆՑ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՑՅԻՍԱՍԱՆ ԴՊՐՈՑՑ

ԱՐԴԻ ԵՒ ԱՊԱԳԱՅ ՎԻՃԱԿԻՆ

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Տփխեայ մէջ հայկազն իշխան Ր.Կ.Բաւթեանցի խմբագրութեամբ հրատարակուող ռուսերէն «Տփխուց լրագիրը» այս տարի իւր թերթին 23-րդ համարին մէջ Կովկասեան եւ Անդրկովկասեան ժողովրդական դպրոցաց վերայ ըրած արդարացի մէկ խորհրդածութեանը մէջ հարկ համարած է այս նկատողութիւնը եւս ընել՝ թէ Լ՚ո՚ա՚ո՚ղ՚ղ՚ական Հայոց Դպրոցները, ինչպէս ամենէն ե՚ր՚ա՚ն՚կ՚ը՚ դէ՚ւ յայտնի է, Գովկասեան ո՚ա՚ո՚ճ՚ական ղեկանի հոգեբարձուին ապրարձակ չէն,— նկատողութիւն մի, որոյ ճշմարտութեան վերայ ամենայն Հայ համոզուած է անոր համար առաւել, որ հայկական դպրոցները Հայոց ազգի եւ Եկեղեցւոյն

հետ անբաժան եւ նուիրական կապ մի ունենալով՝ իսկզբանէ հետէ ինքնուրոյն ազգային հաստատութիւնները համարուած են, ենթարկուելով միշտ ուղղակի եւ անմիջական կերպով ամենայն Հայոց վեհ. Կաթողիկոսի ծայրագոյն խնամակալութեանը։

«Տփխեաց լրագրի» այսպիսի բնական ենթադրութիւնը անբնական եւ օտարոտի երեւցած է յայս Կովկասեան արքունական ուսումնական շրջանի վարչութեան, որ հարկ համարած է «Տփխեաց լրագրի» խմբագրութեան տարակուսութիւնը փարատել՝ տպելով ռուսերէն «Կովկաս» լրագրի 27-րդ թուոյն մէջ հետեւեալ պաշտօնական ծանուցումը, զոր թարգմանաբար այստեղ կդնենք եւ յօդուածիս վերջը անհրաժեշտ կհամարիմք քանի մի ընդհանուր տեսութիւններ ընել հայկական դպրոցաց նկատմամբ, որպէս զի եթէ Կովկասեան արքունական ուսումնական շրջանը նոցա մասին ուրիշ տարակուսութիւններ ունի, թող այդ տարակոյսներն ալ իսպառ փարատուին։

Ա.հաւասիկ թարգմանութիւնը։

«Կովկասեան ուսումնական շրջանէ վարչութենէն։»

«— Կովկաս լրագրի 13 համարին «մէջ Կովկասեան ուսումնական շրջա«նին վարչութիւնը հրատարակած էր «վիճակագրական տեղեկութիւններ, զորս «քաղած էր 1876 տարւոյ պաշտօնական «հաշիւներէն Բագուայ, Տաղիստանի, «Երեւանայ եւ Ելիսաւետպոլի ժողո«վրդական դպրոցաց վերատեսչութեանց «ներքոյ գտնուող դպրոցաց եւ ուսանո«ղաց թուոյն վերայ, որպէս զի ջրէ «Տփխեաց լրագրէն խմբագրութեան հրա«տարակած այն հարկեցուցիչ համոզո«մը, որով իբրու թէ այդ վերատեսչու«թիւնները չունին ժողովրդական դպրո«ցներ, ուսուի եւ դպրոցաց վերատես«չութեան պաշտօնը անօգուտ է։

«Տփխեաց լրագրէն այդօրինակ օտարո«տի եւ աւելի եւս քան զայն ծանուցու«մը հարկադիր կլինի Կովկասեան ու«սումնական շրջանի վարչութեան մատ«նանիշ լինել անոր խմբագրութեան «Բարձրագոյնս հաստատեալ ի 22 նոյ«եմբերի 1873 ամի դատողութեան պե«տական խորհրդոյ ըստ խնդրոյ կազ«մելութեան ուսումնական մասին Կովկա«սեան եւ Անդրկովկասեան աշխարհայ«մէջ, որոյ 8-րդ յօդուածին մէջ սահ«մանուած է այս ինչ. «բոլոր արքունա«կան գաւառական եւ սկզբնական դպրո«ցաց կառավարութիւնը, ինչպէս նա«եւ հանրական եւ մասնաւոր ուսումնա«րանաց, այլ եւ օտարազգեան ազանց«հոգեւոր դպրոցաց հսկողութիւնը «յանձնել՝ Տփխեաց նահանգին մէջ այս«նահանգի ժողովրդական դպրոցաց վե«րատեսչին եւ նորա առանձին օգնա«կանին, իսկ Կովկասեան եւ Անդրա«կովկասեան աշխարհի այլ նահանգաց«եւ շրջանաց մէջ եղածները ժողովրդ«դական դպրոցաց տեսուչներուն[1]). ընդ

(1) Ի վերայ հիման Բարձրագոյնս հաստատեալ ի 27 Յունվարի 1876 ամի դատողութեան պետական Խորհրդոյ ի տեղի ժողովրդական դպրոցաց տեսչութեանց՝ արդ վերատեսչութիւնք հաստատուած են։

«սմին տարածել բոլոր յիշատակեալ
«դպրոցաց վերայ կայսերութեան մէջ
«ներգործող օրէնսդրութիւնը ի մա-
«սին պարտաւորական դաստատութեան
«Ռուսաց լեզուի ամենայն ուսումնարա-
«նաց մէջ. իսկ Ռուսաց պատմութեան
«եւ Ռուսաստանի աշխարհագրութեան
«դաստատութիւնը այն ուսումնարա-
«նաց մէջ, յորս կաւանգուին ընդհա-
«նուր պատմութիւնն ու ընդհանուր
«աշխարհագրութիւնը։

«Այս օրէնքը հրատարակուած է Տէ-
«րութեան օրէնսդրութեան եւ կարգա-
«դրութեանց հաւաքման . . . հատորին
«մէջ յամին 1874, հրատարակուած է
«1874 տարւոյ Կովկաս լրագրի 3 հա-
«մարին մէջ, տպած է Կովկասեան ու-
«սումնական շրջանի վարչութեան շըր-
«ջաբերականին 12 համարին մէջ եւ
«պաշտօնապէս հաղորդուած է լուսա-
«ւորչական Հայոց Սինոդին. ուստի եւ
«օտարոտի լսին է որ այս երկրի մէջ հը-
«րատարակուող լրագիրը չգիտէ այս
«Բարձրագոյն հրամանը եւ կ'ներբ լին-
«քեան ասելոյ ժողովրդեան՝ թէ լը-
«ռո-ռըչական Հայոց դպրոցները, նկատե՛ ոչ
«ոմիանգա՛ն և ը-ըսփանկի-ը ո-ռե+ յայոնկ
«է, Կովկասեան ո-ռո-ճո-կան շրջանի հոգա-
«բաչո-ին պարպարելեալ չէն։

«Ճշմարիտ է որ յիշատակեալ օրինաց
«դործադրութեան ժամանակ Հայոց հո-
«գեւորականութեան կողմանէ տա-
«րակուսութիւններ ծագեցան, որոց
«յատուկ հսկողութեան տակ էին
«մինչեւ այն ատեն բոլոր այս երկրին
«մէջ գտնուող հայկական դպրոցները,
«եւ այս տարակուսութիւնները առա-
«ջարկուեցան Բարձրագոյն նկատողու-
«թեան, բայց ի հետեւումն որոյ կայա-
«ցաւ Բարձրագոյն երկրորդ հրամանն 19
«Յուլիսի 1874 ամի, որ բացատրելով ու-
«սումնական տեսչութեան յարաբերու-
«թիւնները դէպ ի հայկական դպրոցնե-
«րը՝ ի տեղի ընդհանուր հրահանգու-
«թեան, որ տուած էր ժողովրդական
«դպրոցաց տեսչութեան ի29 Հոկտեմբե-
«րի 1871 ամի, սահմանած է Կովկա-
«սեան ուսումնական շրջանի տեսչաց
«համար հետեւեալ գործողութեան շըր-
«ջանը. «Ի պարտս տեսչաց ժողովրդա-
«կան դպրոցաց կվերագրուի Հայոց հո-
«գեւորականութեան կողմանէ հաստա-
«տո-ող եւ կա-ավ-ո-ող հանրակըր-
«թական եկեղեցական — ծխական դպը-
«րոցաց վերաբերութեամբ՝ ըստ գործու-
«թեան Բարձրագոյնս հաստատեալ ի
«22 Նոյեմբերի 1873 ամի գաստղու-
«թեան Պետական խորհրդոյ հսկել ա՝)
«որպէս զի ամենայն (Հայ) դպրոցաց
«մէջ Ռուսաց լեզուն դասախօսուի. իսկ
«այն Դպրոցաց մէջ, յորս կաւանգուին
«ընդհանուր պատմութիւն եւ ընդհա-
«նուր աշխարհագրութիւն, դասախօ-
«սուին նաեւ Ռուսաց պատմութիւնն
«ու Ռուսաստանի աշխարհագրութիւնը
«Ռուս լեզուաւ. ը՝) որպէս զի ուսուա-
«նարանաց դասատուները ո-ո-ահպա-
«պակ եւ կարեւոր բարոյական յատկու-
«թեանց տէր լինին։» Հաղորդելով այս
«Բարձրագոյն հրամանը՝ ներքին գոր-
«ծոց նախարարը ծանոյց՝ թէ «ուսում-
«նարանաց տնտեսական մասին խոս-
«նուելոյ կամ նոցանէ հաշիւ պահան-
«ջելոյ իրաւունք տուած չէ տեսչաց։»

«Կովկասեան ուսումնական շրջանին «վարչութիւնը հրաւիրելով Տփղեաց լու- «ծէն խմբագրութիւնը իւր լրագրի «էջերուն մէջ տալ ներկայ դուցումը, «նոյնը կ'ինդրէ նաեւ ուրիշ լրագրաց «խմբագրութիւններէն, որոնք այս երկ- «րի մէջ ռուսերէն կամ տեղական լե- «զուներով կ'հրատարակուին։»

Ամենայն ողջամիտ եւ բանիմաց ընթերցողը Կովկասեան ուսումնական շրջանի վարչութեան այսօրինակ վարմունքին կամ պատասխանւոյն մէջ անտարակոյս պիտի նշմարէ նոյն վարչութեան ակնյայտնի դիտաւորութիւնը Տփղեաց լուծէն խմբագրութեան հետ բոլոր Հայազգի հասարակութեան հակայղնել, թէ այժմ լուսաւորչական Հայոց դպրոցները պարտադրուած են Կովկասեան ուսումնական շրջանի հոգաբարձուին, որոյ համար իսկ այդ պաշտօնական ճանուցումը բրած է. ապա թէ ոչ, ինչ հարկ կար պատասխանւոյ կամ Տփղեաց լուծէն խմբագրութեան ունեցած համոզման ընդդիմադրութիւն՝ եթէ հայկական դպրոցները ստորագրուած չեն Կովկասեան շրջանի հոգաբարձուին *)։

Կովկասեան ուսումնական շրջանին վարչութիւնը՝ որ գաւառներն հեղինակ հանդիսացած է այսպիսի տարօրինակ ենդրոյ յուզուելուն հայկական դպրոցաց նկատմամբ, կերեւի թէ Հայ հոգեւորականութեան իսկզբանէ Ռուսաստանի դարերով սրբագործուած այս իրաւանց մէջ միջամտելու եւ վնասելու անյաջող ուղղութեամբ, որում տարաբաղդաբար ցարդ եւս հաւատարիմ մնացած է, ինչպէս կերեւի այս պատասխանւոյն մէջ, չգիտեմք՝ թէ որ տրամաբանական օրինաց վերայ հիմնուելով կը ճգնի պետական Խորհրդոյ ճանաչած եւ երած տնօրէնութիւնը հայկական դպրոցաց մասին ըստ հանձայս բացատրութիւն տալով՝ Հայ հոգեւորականութեան իրաւասութիւնը բարձրագոյնս վերահաստատեալ արտօնութեամբ դպրոցներ քանալը եւ կառավարելը խնդրոյն մէջ ըստ լմիք չափաւորել, երեւակայելով թերեւս՝ թէ այդ դպրոցները յայսմհետէ իւր հոգաբարձութեան ստորագրուած կարող են լինել։

Կովկասեան ուսումնական շրջանին վարչութիւնը գուցէ կամովին կանգնած, որ կայսերական վերջին հրամանաւ Հայոց Հայրապետի գաւառաւոր իշխանութիւնը եւ իրաւասութիւնը վերահաստատուած եւ ապահոված է միշտ հայկական եւ հանրակրթական դպրոցներ քանալը եւ կառավարելը նկատմամբ, զոր թէպէտ իւր Տփղեաց լուծէն տուած պատասխանւոյն մէջ լինքնին եւս կ'յիշատակէ՝ մէջ բերելով երկրորդ անգամ կայացած Բարձրագոյն հրամանը յ19 Յուլիսի 1874 ամի, յորում՝ Հայոց հոգեւորականութեան դպրոցներ քանալը եւ կառավարելը մասին ակնարկ եղած է, այնու ամենայնիւ կարծես թէ կրկին ուրանայ հրաժեշտ տալ հայկական դպրոցները Հայոց եկե-

(*) Եւ կամ հակառնեան հարկը և պարտադիր օրէնքը միայն կարող էր պարզել, որոյ համար նաեւ պաշտօն ունին նահանգական աբբուանական վերատեսչութիւնք։ Ս. Խ.

ղեցիկն բաժնուած եւ օտարացած տեսնելու անօգուտ եւ վնասակար համոզման։

Այլ խնդիր է թոյլտուիլն՝ թէ մեր Հայոց ազգային դպրոցաց մէջ ո՞ւսոյց լեզո՞ւ, ո՞ւսոյց պատմո՞ւթիւն և աշխարհագրո՞ւթիւն պարտ ո՞րական դասատո՞ւթիւնը ընծայուած է Կովկասեան ո՞ւսումնական շրջանի պետական հոգեւորականաց մէջ՝ եւ թէ նա յաջողի յարմարիլ դպրոցաց նպատակին ծրագրոյն հետ, որոց խնդրոյ լուծանելու իրաւունքը եւս փարաքսիքսաբար ևրեն արգելուած է։

Ձեմք կարծեր թէ Կովկասեան արքունական ուսումնական վարչութեան անյայտ լինի Հայ հոգեւորականութեան վաղեմի ծնօրէնութիւնները Ռուսաց լեզուն նախ քան զհետեւումն իսկ Բարձրագոյն հրամանի ամենայն Հայ դպրոցաց մէջ պարտաւորական ընելու այն դպրոցաց մէջ, յորս նիւթական միջոցաց ներելովը արգէն հայկական լեզո՞ւ պարտաւորական դասատո՞ւթիւնը պահուած է, մանաւանդ այժմեան ուսումնածաւալ Հայրապետութեան օրով, որոյ ներկայացուցիչ Վեհ. Ծայրագոյն Պատրիարքը եւ ամենայն Հայոց Կաթուղիկոսը ոչնչ խնամք եւ գործունէութիւն պացած չէ բոլ պարտուց պաշտամանն՝ Օգոստ. Թագաւոր Կայսեր Հայազգի հաւատարիմ հպատակաց մէջ ճշմարիտ դաստիարակութիւնը տարածելու համար. ուսոյ հետաքրքիր եմք խնդրել՝ թէ որ հայկական բուն բաւականին նիւթապէս ապահովուած դպրոցաց մէջ պակաս է ի Ռուսաստան կամ ի Կովկաս Ռուսաց լեզուի դասատուութիւնը, կամ որ միջնակարգ դպրոցաց մէջ պարտաւորական առարկայից կարգը դասուած չեն նաեւ Ռուսաստանի աշխարհագրութիւնն ու Ռուսաց պատմութիւնը, քանի որ Հայ հոգեւորականութիւնը Հայոց ազգին հետ հաւատացած է՝ թէ այդ դպրոցներէն ելնող աշակերտներէն շատերը անշուշտ պիտի մտնեն տերութեան բարձրագոյն ուսումնարանաց մէջ, որուն այդ առարկայից դասատուութիւնն ալ ընականապէս պարտաւորական պիտի լինի։

Թոյլ ներուի մեզ ասել՝ իբրեւ մեր անձնական առանձին համոզումը՝ թէ Կովկասեան ուսումնական շրջանին այդ տեսակ հսկողութիւնը աւելի կարեւոր է մենք պակաս ընդունակութիւն եւ ուսումնասիրութիւն ունեցող օտարազանից, ինչպէս Օս, Չերքէզ՝ Կովկասեան լեռնաբնակ ազգաց եւ այլոց, որոնք արգարեւ կարօտ են խիստ ու բազմակողմանի հսկողութեան լուսաւորութեան շաւղին մէջ մտնելու համար. իսկ մեզ Հայոց համար գրեթէ աւելորդ եւս էր, որ կցանկամք Ռուսաց լեզուի, Ռուսաստանի աշխարհագրութեան եւ պատմութեան պարտաւորական գիտութեան հետ՝ եթէ հնար է՝ եւ մեր դպրոցաց նիւթական միջոցները ներեն՝ մուծանել Հայ հոգեւոր — դպրոցաց մէջ նաեւ Գաղղիարէն եւ Գերմաներէն լեզուաց ուսումը հանդերձ

այլոլք կարեւոր եւ կենցաղօգուտ առարկայիք, որոնք արդէն իսկ կդասախօսուին ազգային մկրնակարգ դպրոցաց մէջ։

Ի վերայ այսր ամենայնի Հայոց Հոգեւորականութիւնը եւ ամենայն Հայ անհատը շնորհակալ կլինի եւ պիտի լինի բարեխնամ Տէրութեան այս լուսաւոր տնօրէնութեանը, եւ յայսմ հետէ եթէ նարդախաւիա ղրպարտութիւնք չլինին՝ պարզ պիտի տեսնուի Ռուսոց (տիրող կրճսանութեան) լեզուաց զարգացման վերայ ունեցած անկեղծ ջանքը. իսկ հայկազուն պատանեաց բոլորովին պիտի գիւրանայ բարձրագոյն ուսումնարաններ մտնելու ցանկալի ճանապարհը նոյն իսկ սկզբնական դպրոցներէն սկսեալ. ուստի Կոլկասեան ուսումնական շրջանին վարչութիւնը թոյլ բնաւ չտարակուսի՝ թէ իւր վերայ դրուած հովուապետը Հայ դպրոցաց մէջ Ո՛ւս լեզուի գաւառականը սպրդեցնելոյ համար ոչ միայն Հայ Հոգեւորականութեան, այլ եւ իւրաքանչիւր Հայոյ կողմանէ համակրութիւն պիտի գտնէ եւ պարտեւազատ ձեռնտուութիւն ոչ ոք պիտի չզլանայ՝ որքան ազգ. դպրոցաց նկրթական միջոցները ներեն՝ եւ որ մեծն է՝ եթէ Կոլկասեան արքունի. ուսումնական շրջանը կամ նորոգ հաստատեալ վերատեսչութիւնները իւրաքանչիւր նահանգաց մէջ դուրս չելնեն իրենց համար գծուած եւ սահմանուած գործունէութեան շրջաններէն եւ միջամուխ չլինին ամենայն Հայոց վ.եկ. Պատրիարք - Կաթուղիկոսի եւ Հայոց Հոգեւորականութեան նորոգ վերահաստատութեամբ շնորհուած Բարձրագոյն Թոյլտուութեան եւ արտօնութեանց դպրոցներ բանալու, կառավարելու, եւլն խնդրոց մէջ։

Յուսալով թէ բաւական պարզուեցաւ Հայ Հոգեւորականութեան Կոլկասեան ուսումնական շրջանին հետ յայսմհետէ ունենալիք յարաբերութիւնները եւ Տիեզոյ լուսերը արդարացաւ իւր ըրած ենթադրութեան մէջ՝ թէ Լուսաւորչական Հայոց դպրոցները, ինչպէս ամենեցուն և իւրաքանչիւրոյ ուրէք յայտնի է, ՉԵՆ ՍՏՈՐԱԴՐՈՒԱԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԻՆ, ԱՅԼ (ստորագրուած են) ուղղիչ Հայոց Հոգեւորականութեան, եւ յատկապէս ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ՝ ԻՐՐԻ ԾԱՅՐԱԳՈՅՆ ԳԼԽՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑՆ ՀԱՅՈՑ, իսկ նահանգական արքունական ժողովրդական դպրոցաց վերատեսուչներուն, կամ որ նոյն է՝ Կովկասեան ուսումնական շրջանին վերոյ նշեալ Հայկական դպրոցաց մէջ ՌՈՒՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԵՒ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԱՑ ՄԷՋ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄԸ ԿԱՄ ԴԱՍՏՈՒՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՏԱԿԱՆՈՐԱԿԱՆ ԸՆԵԼՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹԻՒՆԸ, մեք կարեւոր դատեցինք այս եւս յաւելուլ՝ թէ ընթերցողը այս տեսակ յեզափոխութեանց եւ երեւոյթներու վերայ բնաւ պիտի չզարմանայ, եթէ վերջը բերէ նորերումն ազգի լրագիրներէն մէկուն մէջ հակազգային այլ եւ այլ կրօնական եւ դպրոցական խնդրոց անհեւատես տղայութիւնը, Հայոց կաթուղիկոսն ու հայկական լեզուն իրարմէ խըս-

տիւ որոշելու եւ անջատելու, Հայ հոգեւորականութիւնը զրպարտելու եւ նորա վարկը կոտրելու, զպրոցն եւ եկեղեցին իրարմէ պառակտելու բաղմահնար ջանքերը, որոց ձայնակից գըտնուելով մեր աղգային ուրիշ քանի մի տգէտ եւ օտարոտասէր գրագէտները, անձամբ անձին առիթ եւ պատճառ կընձեռեմք օտարաց սխալ կերպով ըմբռնելու մեր եկեղեցւոյ եւ աղգի կրօնական ու բարոյական դիրքը՝ կապն ու պայմանը, մեր Աղգի հոգեւոր պաշտօնէից կամ հոգեւորականութեան իրական եւ իսկական նշանակութիւնը եւ պատմական կեանքը, որոյ հետեւանք պիտի համարուի անշուշտ նաեւ Կովկասեան տրքունական ռուսումնական շրջանի վարչութեան տարօրինակ ուղղութիւնը եւ հետամտութիւնը առ այն՝ թէ երբ եւ ևցէ Հայոց զպրոցները կարող են կամ պարաւին օտարանալ Հայոց Եկեղեցիէն։

Առ ժամս այսքանը բաւական Թող համարուի ի լուծումն տարակուսութեանց· իսկ ուրիշ անգամ՝ հարկ պիտի լինի Ս. Էջմիածնի տպարանին, ազգային ուրիշ իրաւանց եւ արտօնութեանց նկատմամբ, զորս Ազգոստափառ կայսերք Ռուսաց բարեհաճած են առանձին սահմանադրութեամբ վերահաստատել եւ շնորհել Հայ աղգին, օտարաց մտքը ծագած տարակուսութիւնները ջրելու համար նորին գրիչ ձեռք առնուլ եւ ճշմարտութեան մեր պարտքը հատուցանել։

ՀԱՅԿՈՐԴԻ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԽՕՍՆԱԿՆ ԱԻԵՐԱՅՐԻ

Գարնան էր առաւօտն։

Ծակոտէր ծակ ծակ արեգն ի հրավառ նետս թափանցանց զպատխպատ թանձրութիւն առաջատից ամպոց, և պատառէր ծիւ ծիւ գարուն ի ծուէնս անկարկատելի զթխագոյն ոստայն ձմերան։ Մերկանայր մեղմիկ երկին զկապոյտ բոլորակ երես իւր ի սևաթոյր քօղոյ, և շողայր անդէն ի դէմն նորա ամն ոսկեձաձանչ վարդակարմիր արեգին։

Թանային տակաւ առ տակաւ դրունք գարնան ի ծիծառանց նուագս աւետեաց, և շունչք արևելից զկոյտս լուծեալ զձեանց և զսառնամանեաց բիւրեղ՝ ի դիրկս խառնէին յորդախաղաց գետոց։ Թանայր յայնժամ երկիր զարգաւանդն իւր արգանդ բաղմածին՝ ի ծին ձօնից աւետելոյ՝ մէն մի Նախախնամին շնորհաց տրիտուր։ Օվ բնութեանն կիսամեռ կապտելոյ ժամ էր դառնալ անդրէն ի կենդանութիւն, և ըղփառս վերստին զգեցեալ զգեղահրաշ գարնան՝ զսուգ ի սրտէ ի բաց փարատել և զթախիծ յերկրէ մահկանացուաց։

Ընթանային յայնժամ և ձայնք աւետեաց բնութեանն յարուցեալոյ ի դալարիկս գարնանագարշարձ երգոց օդապար թռչնոց, և շունչ քաղցրաբոյր օդոյ ի հոտ անուշիկ քաղցրաբոյր ծաղկանց թոյր ի թոյր զարդարելոց յերկին երկին երանգաց նարօտից ընդ դարևանդս և հովիտս Էդեմայ, և բչնեն բաւաչէն ծննդաւոր խաշանց և արջառոց վնոյն հնչէին կենդանու-

թիւն ընդ դալարագեղ լերինս սիզաւէտն Ջարևանդայ։ Ծփայր ծաճանէր և ծիծաղէր անդէն և ծով ծիրանի կապուտան ի միջին, և խումբ թռչնանց անդէն իբրև զատինս բոլորշայից մարմարեայ ի ձիւնափայլ գրկաց նորա համբառնային զկատար իրը ի համբոյր ալեաց վէմ ի վէմ ի շուրթըն եղերացն սահէին։

Երկինք պատմէին ինձ զփառս քո, Տէր, ի վերուստ, և երկիր յուշանէր ի ներքուստ զՔէ ողորմութեան քոյ, Աստուած։ Տեսի անդ զմեծութիւն զօրութեան և զսէր զթութեան քո, և յիշեցի անդ զվարդն քո Վարդան վառեալ քով սիրով, զոր լայր նստեալ անմխիթար Խօսնակն Ալարայրի ի չոր և ցամաք թուխս սգաւոր վարդենեացն Երատզոյ, ուր անկեալ թառամեցաւ նա ի սէր քո և հայրենեաց. և ասեմ. Մեծ է սուգ և ողբ Խօսնակիդ քան զամենայն հեծութիւն սիրահարի ի սէր վարդին Երատզոյ, և ուստի է քեզ այդչափ ոգի մեծ և սէր սերտ, թռչնիկդ Հայաստանի։ Եւ ասէ. Մեծ է սէրն Աստուծոյ և հայրենեաց ի վարդիս քան զամենայն մեծութիւն աշխարհի և աշխարհս, և ուստի է ձեզ այդչափ ոգի փոքրոգի և սիրտ սառն ի սէր վարդիս և հայրենեաց, որդիդ Հայաստանի։ Եւ զարտասուս հարեալ լայի և ասէի. Ո՜հայրենեացն իմ հա՛ր ղողք և զվարդին Վարդանայ, Խօսնակդ Ալարայրի, և երգեր և լայեք, և դեռ արտասուացս լճանէր ի Տղմուտ, և ահա մնատուցեալ տեսի՝ զրբքոյն էր Եղիշեայ զոր կարդայր, և ոսկերքըն Վարդանայ զոր ողբայր։

ՍԱՄՈՒԷԼ ԴԻՒԶԱՏԵԱՆՑ.

ԱԶԳԱՅԻՆ

Ի ԲԹԱՒԻՈՑ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ.

Անցեալ տարւոյ Դեկտ. 4/16 ամնաթուով Հնդկաստանի Բթաւիա քաղաքէն ստացեալ մի գրութեանէ կտեղեկանամք, զի Գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոս Ծայրագոյն Նուիրակն յ7/19ն Հոկտեմբերի Յոկոհամա — Աբէպէ շոգենաւով կալկաթայէն մեկնելէ զկնի՝ ի 15/27ն ամսոյն (Հոկտ.) ի Պինանկ հասած է, (ուր մի տուն Հայ, մի եկեղեցի եւ մի քահանայ կայ,) եւ նոյն օրը մեկնելով՝ ի 17/29 ամսոյն ի Սինկափօր գնացած է, նոյն օրը անտի եւս մեկնելով՝ ի 24ն գնացած է ի Հօնկ — Քօնկ կղզին, (ուր 7 հոգի միայն երթեւեկ Հայեր կան առանց ընտանեաց,) ի 4 — 16ն Նոյեմբերի Հօնկ — Քօնկէն վերադարձեր է ի Սինկափօր (ի 10/22ն ամսոյն) եւ անտի երկու օրէն մեկնելով՝ ի 14/26ն ամսոյ անվնաս հասած է ի Բթաւիա։

Յիշեալ նամակում խոստացած է հետագայ գրութեամբք հաղորդել մանրամասն տեղեկութիւնքը եւ վիճակագրութիւնքը։

Այս առթիւ պարտք կհամարիմք յատուկ շնորհակալութիւն յայտնել առ Վսեմ. Պ. Աղէքսանդր Յարութ. Աբգարեանց՝ գովելով նորին բարեպաշտութիւնը եւ եռանդը, որ բարեհաճած է շոգենաւի տոմսակը անձամբ անձին տանել եւ նուիրել Գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոսին, որով ձրի գնացած է

մինչեւ ի Զին եւ անտի դարձած է ի Սենկափօր, եւ պիտի վերադառնայ ի Կալկաթա։

Աւետուրեք մեր եղբարք մեծ սիրով եւ եռանդեամբ դիմաւորած՝ ընդունած եւ հիւրասիրած են իւրեանց Առաջնորդը՝ եւ վոխադարձաբար մխիթարուած։

Պ. ԱՂԵՔՍԱՆԴՐ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ.

Գանձակեցի Մեծ. Պ. Աղեքսանդր Աղաջանեան Իսահակեանց՝ ըստ յորդորանաց Հոգեզգօն Գլխոգոր Եպիսկոպոսի Մուշեղեանց՝ յանուն եւ ի նպաստ Ձեմարանի Մայր Աթոռոյս տարեկան չ՚ոո՚ն ռուբլի նուիրել ուխտելով իւրաքանչիւր հանգուցեալ հօրն իւրոյ Պ. Աղաջանի, ներկայ տարւոյս համար կատարեց իւր խոստումը՝ չ՚ոո՚ն ռբլ. նուէրը յղելով առ Վ.ԵՀ. Հայրապետ Աղգիս, ուստի եւ Նորին Սրբութեան Օրհնութեան Կոնդակին արժանացաւ։

Կգովեմք յիշեալ բարեպաշտ երիտասարդի ուսումնասիրական եռանդը եւ առաքինասիրութիւնը՝ եւ հրապարակաւ շնորհակալութիւն կը յայտնեմք։

ԽԱՉԱՆՇԻՆ.

Վեհ. Հայրապետ ամենայն Հայոց՝ Սրբազնոյ վիճակին Փոխանորդ եւ Հոգեւոր դպրոցաց Թեմական Վերատեսուչ բարեշնորհ Արխտակէս Վարդապետի Համեստ վարք եւ խոհեմ ընթացքն, ուսումնասիրական ջանք եւ մատենագրական վաստակքն, կրթական արդիւնքն՝ մանաւանդ բարեկարգեսեր նախանձախնդրութիւնն եւ կառավարական յաջողակութիւնն իւր պաշտօնի մէջ՝ բազում գովեստից արժանի են, ուստի եւ լրաւամբ արժանացաւ Վ.ԵՀ. Հայրապետի ուշադրութեան եւ յիշեալ պարգեւատրութեան, որով անշուշտ աւելի խրախուսուելով եւ մխիթարուելով՝ յաւէտ կաշխատի յօգուտ եւ ի փառս Աղգի եւ եկեղեցւոյ Հայաստանեայց ինչպէս նաեւ վիճակին Արցախոյ՝ անձնանուէր եւ արդիւնաւոր գործել եւ շահատակել, եւ առաւել եւս պատուոյ եւ փառաց արժանանալ։

Յաւօք սրտի կհաղորդեմք, դի ամսոյս 6ին լուսնալոյ գիշեր՝ Ալաջլխա քաղաքում վախճանեցաւ

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅՑ
ՏԻՄԻՐՃՕՂԼԵԱՆՑ,

որ Ալաջլալաքու եւ Ծալկայի կողմանց Դործակատար էր եւ յատուկ պաշտօնով յիշեալ քաղաքը գնացած էր նոյն օրերում։

Հանգուցեալն երկիւղած՝ բարեպաշտ եւ ջերմեռանդ կրօնասիրութիւնն, ազնիւ եւ հեզահամբոյր բնաւորութիւնն, համեստ վարք եւ բարքն, Հոգեւոր Իշխանութեան յանձնարարութեանց կա-

տարման մէջ ունեցած ղեկուչութիւնն՝ արհնութիւնն եւ յաջողակութիւնն, նորա գործակատարութեան եւ խնամոյ յանձնուած վիճակի եկեղեցեաց եւ դպրոցաց վերայ ունեցած բարի հսկողութիւնն եւ աչալրջութիւնն՝ ինչպէս նաեւ ժողովրդեան սիրոյից համար ունեցած կարեկից եւ բարեգութ հոգածութիւնն՝ բազում գովեստից արժանի են, եւ այսպիսի արժանաւորութեանցն համար՝ Հոգեւոր Ծայրագոյն Իշխանութենէ վայելուչ պարգեւաց՝ նշանաց եւ շնորհակալութեան Կոնդակաց արժանացած էր, եւ ի կնիք ամենայնի՝ Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցւոյ գաւթում եւս ի գերեզման անիծուածոյ պարծանք եւ վկայարանութիւնը ունեցաւ։

Այսպիսի արժանայիշատակ անձի եւ գործակատարի մահը արդարեւ խիստ ղգալի կորուստ է Ախալքալաքի եւ Ծալկայի վիճակին համար։

Հոգին սուրբ լուսաւորեսցէ եւ արժանացուսցէ զհոգի հանգուցելոյն ի լոյս փառաց երեսաց իւրոց, եւ վկայարեսցէ զոգագղեաց ընտանեան։

Հետագայ նամակը իբր յայտարարութիւն ըստ թախանձանաց նամակագիրը Հոգաբարձուաց հրատարակելով ամենագրոյս մէջ՝ յոյս մեծ ունիմք՝ որ բարեսէր մերազնեայք նկատելով եւ համակրելով յայտարարեալ բարի նպատակին՝ զկնի ձեռնհաս ազգայինք կհաճին մի մի նուէրով նպաստել յիշեալ հոգաբարձութեան, որով պիտի մխիթարեն նոպայութէ Հայկազն աղքատ մանկտին։

Ի ՆՈՂԱՅՍՔԷ.

Խմբագրութեան Ընթացք Ամագրոյ.

Հոգաբարձութիւնս խոնարհաբար կհնդրէ ընթերցասէր Խմբագրութենէդ հրատարակել Ընթերցից մէջ հետեւեալ գրութիւնը։

Նողայսք քաղաքի Հայոց Հոգեւոր — Տխական երկսեռ դպրոցի Հոգաբարձութիւնը՝ ընդունելով այս օրերս մէկ բարեսէր ազգայինէս իւր յօրինած Հայերէն Քերականութեան երկրորդ տպագրութեան ընդօրինակ (1200 օրինակի համար) իրաւունքը յօգուտ աղքատ աշակերտաց, և դպրոցս չունելով կարողութիւն զայն տպագրել տալու, որ յետոյ կարենար վաճառել և այնու քիչ կամ շատ դպրոցի պակասութիւնքը լցնել և ողորմելի աղքատ աշակերտաց գրեանքն ու հանդերձեղէնը հոգալ, — նուիրական պարտականութիւն ինքեան համարի այսու դիմել օժանդակութեան բարերար անձանց՝ և յանուն մատաղերամ աշակերտաց դպրոցիս խնդրել զկատարեալ նուէրս յիշատակել դրքի տպագրութեան համար, յուսալով որ իւրաքանչիւր ոք քաղցր պարտականութիւն պիտի համարի արկանել դիւր ընծայն ի զանձանակ բարեպէս միջոցին ազգային կարօտեալ մանկտւոյն։

Այլ և Հոգաբարձութիւնս խոնարհաբար կընդրէ ի բարերարաց՝ իւրեանց նուէրքը բարեհաճել առաքել այսու հասցէիս. — Въ г. Новайскъ Таврической Губерніи, въ Попечительство Армянскаго Церковно — Приходскаго Училища.

Նուիրատուաց անուանքը նուիրանօքն հանդերձ պիտի հրատարակուին ի ժամանակին։

Հոգաբարձուք Մկրտիչ Խալաճեան
Յակոբ Զուլալեթեանց
Գէորգ Ռ. Սահեռեան

Ի ՓԱՐԻԶԷ·

փարիզ եւ իւր գեղեցկութիւնքը· — հռովմէադաւան եկեղեցիք· — հայկական աղօթատուն չկայ· — փարիզի քրիստոնեայք եւ հայք· — հայ եկեղեցականք· — մոռբատեան ուսուցմնարան· — հռովմէական եկեղեցականք· — հասարակապետութիւն եւ իւր դարի արդիւնքն·

Փարիզ ևկած օտարականին հարկաւոր են ամբողջ ամիսներ, ամբողջ տարիներ, մի կողմից՝ կանոնաւոր շաղկապ տալու համար այն բազմաթիւ և բազմատեսակ տպաւորութիւններին, որը գործում է այս հրաշալի և բազմահոչակ մայրաքաղաքը իւր արտաքին դրութիւնով և ներքին կեանքով, միւս կողմից՝ պատահելու, ծանօթանալու, ուսումնասիրելու և հասկանալու համար սորա ընտանեկան, հասարակական, քաղաքական, մտաւոր և հոգևոր, կեանքի անթիւ լաւ և վատ երևոյթները·

Հոյակապ և լայնածաւալ Փարիզի արտաքին դրութիւնը և տպաւորութիւնը ներկայացնելու համար հարկաւոր է կամ յաջողակ բանաստեղծի երևակայութիւն և կամ հանճարեղ վրձինի նկարչական պատկեր· Նորիկ օտարականի ուշադրութիւնը յատկապէս են լայն և փառաւոր փողոցները, մեծամեծ և հոյակապ շինութիւնները, արքունի պալատները, հնադարեան եկեղեցիները, հասարակական հաստատութեանց ընակարանները, թատրոնները, կամարջները, բազմաթիւ արձանները, ևլն, ևլն·

Տները ըստ մեծի մասին վեց և եօթը յարկանի, համարեա միևնոյն ճարտարապետական ոճ ունին· սոցա ներքնայարկերում գետնուած են հիանալի կրպակներ, ուր բազմաթիւ և բազմատեսակ իրեղէնները շլացնում են միանգամայն մարդուս աչքը· Ո՛չ միայն նորիկ օտարականները՝ այլ նոյն իսկ մշտաբնակ Փարիզացիները ամենայն սեռի և դասակարգի խումբ խումբ կանգնած են այդ կրպակների առաջև և ամբողջ ժամերով նայում են գեղեցիկ ճաշակով դասաւորուած նորանոր և զարմանալի բաների վերայ· Իւրաքանչիւր բանի վերայ կայ գրած իւր գինը, իսկ կրպակներում վաճառողները ըստ մեծի մասին կանայք են·

Փարիզի փողոցները շատ լայն են և պատուական կերպով սալայատակած, թէև կան այս տեղ նաև շատ կարճ և շատ նեղ փողոցներ· Զարմանալի հոգատարութեամբ և մեծամեծ ծախքերով պահպանվում է փողոցների մաքրութիւնը· շատ փողոցների վերայ կան տնկած մեծ մեծ և գեղեցիկ ծառեր· Փարիզին առանձին գեղեցկութիւն են տալի հասարակական պարտէզները, ուր բացի բազմաթիւ և խորհրդաւոր արձաններից՝ կան հիանալի լճեր և շատրուաններ· Ո՛չ պակաս գեղեցկութիւն են տալի քաղաքին մեծ մեծ և գեղեցիկ հրապարակները, ուր կան շատ երևելի արձաններ· Վերջապէս լայն Սէն գետը իւր գեղեցիկ կամարջներով և քաղաքին կուր մատակարարող զմայլելի ափազանները հրաշակերտ արձաններով լրացնում են Փարիզի գեղեցկութիւնը· Թէև Ֆրանկո—Պրուսական պատերազմից յետոյ պատահած յեղափոխութեանց բարբարոսական հետքերը — հոյակապ պալատների, շինուածների, արձանների աւերակները — դեռ ևս նշմարվում են շատ տեղերում, բայց հասարակապետական վարչութիւնը աշխատում է վերականգնել, նորոգել, աւելի լաւ կերպով շինել նոցա՝ ծախսելով միլիոնաւոր գումարներ· Նոյն վարչութիւնը աշխատում է վերանորոգել և ընդարձակել համալսարանների՝ ուսումնարանների շինութիւնները, որք առ այժմ շատ տխուր դրութեան մէջ են·

Փարիզի առանձին ղարդը կազմում են կաթոլիկաց եկեղեցիները· Թէև թուով սորա շատ չեն, 40—50 հատ, բայց ըստ մեծի մասին խիստ մեծ են· Եկեղեցիները շատ նման են միմեանց իւրեանց արտաքին և ներքին ճարտարապետական ոճով· Ներսից եկեղեցին սովորաբար բաժանուած է երիք մասն բազմաթիւ սիւներով, կապուած միմեանց հետ կամարներով· այս ոճը այն պակասութիւնը ունի որ՝ եկեղեցին կորցնում է իւր ամբողջութիւնը· մեր Հայկական եկեղեցին ունենալով միայն չորս սիւն՝ ներկայացնում է մի հիանալի ամբողջութիւն իւր զլուխաւոր կամարով մէջտեղում· Եկեղեցւոյ միջի բաժանմունքը աւելի մեծ է՝ քան թէ կողքերինը, որ պատերին

կից շինած են բազմաթիւ փոքր մատուռներ առանձին սեղաններով։ Շատ տարօրինակ տպաւորութիւն է գործում անսովոր աչքի վերայ՝ երբ մտնելով եկեղեցին՝ տեսնում ես այդ մանր մատուռներում հինգ — տասը տեղ առանձին ըն- (անձայն) պատարագներ, մինչդեռ միևնոյն ժամանակ աւագ սեղանի վերայ կատարվում է ձայնաւոր պատարագ բարձրաձայն երգեցողութեամբ և երգհնչի հրաժշտութեամբ։ Ժողովուրդը բաժանուած է խումբ խումբ և դորանով եկեղեցին բոլորովին կորցնում է իր միութիւնը և ընդհանրականութեան խորհուրդը՝ կարծես թէ ժողովրդականք խուռված միմեանցից երեսը դանագան կողմն են դարձուցած։ Եկեղեցւոյ մէջ շրջած են բազմաթիւ աթոռներ նստելու և ծունկի վերայ իջնելու (չոքելու) համար։ Հանդիսաւոր օրերին դորա վերայ նստելու իրաւունքը ձախ-ը՞ւ է պոչը, թէև դրա մեծ պահքի և գլխաւոր տօների համար ծախսուած են առանձին կերպով։ Շատ սակաւ եկեղեցիներում կան պատերի վերայ սրբոց պատկերներ. ընդհակառակն բոլոր սեղանների վերայ, նաև եկեղեցւոյ ուրիշ շատ տեղերում, կանգնած են Յիսուսի, Աստուածածնի և Հռոմէական եկեղեցւոյ սրբերի և սրբուհիների արձանները, ըստ մեծի մասին ոսկեայ կաւիճից (ալաբաստրից) թափած, որոց վերայ և չորս կողմը շարած են արուեստական ծաղիկներից պսակներ և փնջեր։ Փարիզի եկեղեցիների մէջ ամենահրեշելին է, մանաւանդ իր մեծութեամբ և արտաքին քանդակագործ արձաններով և զարդերով, մայր եկեղեցին — Նօթր-Դամ-դը-Պարէ։

Ես չեմ խօսի օտարազգեան եկեղեցիների և աղօթարանների վերայ, այլ ցաւօք սրտի կյիշեմ միայն որ Հայերը չունին այստեղ ոչ եկեղեցի և ոչ աղօթատուն։ Այս պակասութիւնը զգալի է առհասարակ և մանաւանդ եկեղեցական մեծամեծ և խորհրդաւոր տօների ժամանակ, ինչպես ահա աշխարհի Փրկիչ Յիսուս Քրիստոսի Ծննդեան և Մկրտութեան օրը, երբ Հայաստանեայց եկեղեցին այնպիսի մեծաշուք հանդեսով լցնում է մարդու սիրտը առանձին ջերմեռանդութեամբ և մխիթարութեամբ, մենք այստեղ մնացինք զուրկ այդ վսեմ մխիթարութիւնից։ Մինչև անցեալ տարի Օսմանեան տէրութիւնը պահում է եղել Փարիզում իր ռաճկով մի Հայ Քահանայ *) իր որդեդիր Հայ ուսանող և կատարելագործուող երիտասարդների համար, բայց անցեալ տարի, պատերազմի պատճառով, յիսուս կոչելով համարեա բոլոր որդեգիրները՝ Օսմանեան տէրութիւնը յիսուս է կոչել և քահանային, ուստի նորա պահած մատուռը նշոյլպես փակուել է։ Չէ կարելի առանց մեղադրանքի թողնել այն հարուստ Հայերը, որք՝ կամ ժամանակաւորապես և կամ մշտապես ապրելով Փարիզում՝ չեն հոգացել պատրաստել մի մշտական Հայոց եկեղեցի կամ աղօթատուն։ Այն մեղադրանքից չեն կարող ի հարկէ ազատ մնալ նաև այն . . . . վերադարձած գերապատիւ Հայրերը, որք՝ ոմանք մի քանի և ոմանք շատ տարի մնալով այստեղ և ոչ սակաւ դումարներ անցուցանելով իւրեանց ձեռքի տակ՝ նոյնպես չեն հոգացել այս նշանաւոր խնդրոյ մասին . . . ։

Փարիզը Լոնդոնից յետոյ առաջին քաղաքն է իր բազմամարդութեամբ։ Վերջին վիճակագրական տեղեկութիւններից երևում է որ՝ նոր վերջացած 1876 թուականում Փարիզը ունեցել է բնակիչներ երկու միլիօն (միայն 13 հազար պակաս)։ Ֆրանկօ-Պրուսական պատերազմից յետոյ, այն է՝ 1872-ից մինչև 1876 թիւը, բնակիչները աւելացել են Փարիզում 300 հազարից աւելի։ Բնակիչների բազմատեսակութեան կողմից Փարիզը կարող է ամենայն վստահութեամբ համարուիլ երկրագունդի մայրաքաղաք, որովհետև բաց ի ամբողջ Եւրոպայի բոլոր ազգերի և ցեղերի բազմաթիւ ներկայացուցիչներից, փողոցներում անդադար տեսնում ես - Հայ, Վրացի, Թուրք, Պարսիկ, Հրէայ, Ամերիկացի սպիտակ՝ խառնածին (կրէօլ) և դեղնագոյն, Ամերիկացի խաւիղիկ, Հընդիկ, Ճապոնացի, Չինացի, մի քանի տեսակ գըն-

(*) Բարեկր. Յովհաննէս Քահանայ Չիւնքէարպէյեան տեառն Պալատցի, որ վերջին յեղափոխութեանց եւ դրամական տագնապներու ատեն վերադարձաւ ի Կ. Պոլիս։ Ս. Խմբ.

ջու (լուշա), ևլն, ևլն։ Հայերի թիւը կը ևնի այս-տեղ հաշիւ 80-100 ըստ մեծի մասին ուսա-նողներ՝ առաւելապես Տաճկաստանից եկած, մի քանի վաճառականներ և մի քանի Տաճկաս-տանցի ընտանիքներ։ Բայց դուցէ ոչ մի օտար քաղաքում այնպէս չէ ջնջուած Հայերի ազգա-յին միութիւնը՝ ինչպէս Փարիզում, ուր Հա-յերը միմեանց հետ ոչինչ յարաբերութիւններ չունին, միմեանց չեն ճանաչում, միմեանց չեն օգ-նում, ոչ ընկերութիւն ունին, ոչ ժողով։ Նոյն իսկ Հայ ընտանիքները, մանաւանդ ապահովա-ցրած լինելով մեծամեծ հարստութիւններով, փոխանակ կեդրոնատեղիներ դառնալու պան-դուխտ երիտասարդների համար, բոլորովին փա-կել են իրենց դուռը։ Այս տխուր և միան-գամայն ցնաստակալ՝ թէ ազգի և թէ կրօնի և բար եպաշտութեան վերաբերմամբ՝ երևութի դէմ խստոր պատճառը այն է որ՝ չկայ այստեղ Հայ-կական եկեղեցի կամ աղօթատուն, ուր Հայերը կարողանային ժողովուիլ գոնեա կիւրակէ և տօն օրերին և պահպանել իրենց ազգային միու-թիւնը։ — Այժմ Փարիզում կան Հայոց վեց վարդապետներ, երեքը Հայաստանեայց եկեղեցւոյ՝ Սարգիս Վ. Թէոդորեան, Եսայի Վ. Աստուածա-տուրեան և Վահան Վ. Բաստամեան, և երեքը կաթոլիկ՝ Հ. Գէորգ՝ Արարիայի կողմերից, Հ. Ամեանգինէս և Հ Աբրահամ Վենետկի միա-բանք։ Սարգիս Վարդապետը արդէն յայտնի է բոլոր Հայերին իր մտաւնագրական և այլ տեսակ գոր-ծունէութիւններով. սա արդէն հասած է զառա-մեալ ծերութեան, բայց շատ լաւ պահպանել է բոլոր զգայարանները և շարունակում է իր ու-սումնական պարապմունքները։ Աստուածատու-րեան Վարդապետը արդէն տարի ու կէս է այստեղ է և ասում են ուսումնասիրում է Ֆրանսերէն լե-զուն և աստուածաբանական առարկաները, իսկ Բաստամեանց Վարդապետը նոր է եկած տկարու-թեան պատճառով և լսում ենք որ՝ պատրաստում է յատկապէս եկեղեցական իրաւագիտութեամբ։ Կաթոլիկ վարդապետներից Հ. Գէորգը իբրև Հա-սունեան խմբի կուսակից աքսորուած լինելով Հա-կահասունեան խմբի կողմից և մի քանի ժամա-նակ աստանդական թափառելով՝ այժմ ապ-րում է այստեղ։ Հ. Ամեանգինէսը արդէն չորս հինգ տարի է որ՝ նստած է Մուրատեան ու-սումնարանի մէջ և պահպանում է տունը և այլ կարասիքը. իսկ Հ Աբրահամը միայն քանի մի ամիս առաջ ուղարկուած է Վենետկի Մխի-թարեան միաբանութեան կողմից, ինչպէս լսում ենք, յատուկ յանձնարարութիւնով՝ շուտով ծախել Մուրատեան ուսումնարանի տունը, որը գնահատել է ճարտարապետը, ասում են, մօտ մի միլիոն ֆրանկ։ Ի դէպ ասել՝ այս հոյակապ տու-նը ներկայացնում է այժմ մի տխուր մեռելու-թիւն . . . . իսկ ինչ վերաբերվում է տունը ծախելու խնդրոյն, մենք շատ ենք լսել որ՝ մեր կարծիքով՝ Մխիթարեանք բնաւ իրաւունք չունին առ այդ, ըստ օրում՝ այդ տունը իւր բոլոր դումարներով, ինչպէս յայտնի է, պատկանում է ամբողջ ազգին։ Անցեալ տարի Կ. Պոլսոյ ազգա-յին թերթերը խնդիր յարուցին այս ուսումնա-րանի մասին, բայց քաղաքական հանգամանքները այլ կողմ դրաւեցին հասարակութեան ուշադրու-թիւնը։ Թուի թէ՝ օգուտ քաղելով հանգամանք-ներից՝ Մխիթարեանք շտապում են ծախել տունը և այնուհետև գնա հաշիւ պահանջի՛ ընօգտից . . ։ Այսպիսի վնասակար գործի առաջը առնելու համար մեր կարծիքով՝ Կ. Պոլսոյ Հայոց պատ-րիարքարանը պէտք է դիմէ ընդհանուր Հայոց Հայ-րապետին՝ որ կատարեալ իրաւունք ունի խափա-նել այս կամ այն միջոցով տան վաճառումն մինչև կըվճռուի սոյն կնճռոտ խնդիրը։

Թէև Փարիզում քիչ կան եկեղեցիներ և վանքեր, բայց հոգևորականները սրական և ի-դական սեռի խիստ շատ են։ Բայ ի Արքեպիսկո-պոսից և մի քանի եպիսկոպոսներից՝ քաղաքը լե-ց կուսակրօն քահանաերով, և այլ և այլ դա-սակարգերի, ղոր օրինակ ճիզուիտներ, քնէ-դիկտեաններ, դոմինիկեաններ, կապուչիններ ևլն վանականներով, և առաւել ևս բազմաթիւ մայրապետներով։ Սոքա ամենքեան ունին իւր-եանց առանձին հանդերձներ, և շատ անգամ խումբ խումբ շրջում են փողոցներում։ Քա-հանաները և վանականները ըստ մեծի մասին հա-գած ունին ոչ այնքան բարեվայելուչ շորեր, և ղղուանք են շարժում իրենց ամէն յայտնի փա-

բիսեցուվեամբ, այն է՝ նոքա փողոցներում և ծառուղիներում և պարտէզներում շրջելիս միշտ դիրք են կարդում . . . . Թէև Փարիզեցիք աւելի չեն սիրում և յարգում իւրեանց հոգևորականներին, բայց այնու ամենայնիւ սոքա մեծ դեր են խաղում Ֆրանսիայի կեանքի մէջ։ Փարիզում հոգևորականները ունին բազմաթիւ պաշտօնական և մասնաւոր ուսումնարաններ. նոքա ազդում են արքունի ուսումնարանների վարիչների և ուսուցիչների վերայ ընտանեկան կամ այլ տեսակ միջոցներով. նոքա ունին իւրեանց համալսարան, նոքա ունին աստուածաբանական ման Սորբօնի համալսարանում. նոքա ունին իւրեանց ներկայացուցիչները հասարակապետութեան ծերակուտում և կուսակիցներ ազգային հրեսխոհանների ժողովում, ևլն, ևլն։ Նոքա կարողացել են պահպանել իւրեանց նշանակութիւնը և ազդեցութիւնը մինչև անգամ հասարակապետական վարչութեան վերայ արտաքին ձևերով. այսպէս Յունվարի 14՝ բոլոր եկեղեցիներում մեծ հանդէսով կատարուեցան մաղթանքներ ազգային երեսփոխանաց ժողովի և օրէնսդրական ժողովի (ծերակոյտ) ձմերային նիստերի բացման սկզբում։ Այդ հանդէսը աւելի մեծաշուք էր Նօտր-Դամ-ում - Պարի մայր եկեղեցում ուր ներկայ էին ծերակուտի և ազգային ժողովի բոլոր անդամները, զինուորական և քաղաքական բարձրաստիճան պաշտօնեաները և բազմաթիւ հետևակ և հեծելազօր զօրքեր։

Թէպէտ որպէս հոգևորականները, նոյնպէս և բնապաշտպանները, Աբբայականները, Օրլեանականները, Ընմապականները, և այլ բազմաթիւ քաղաքական խումբերը կամ կուսակցութիւնները, ամեն կերպով աշխատում են փորել հասարակապետական կառավարութեան տակը, բայց ինչպէս երեւում է՝ հասարակապետութիւնը այս անգամ բաւական հաստատ հիմք է ձգել բոլոր Ֆրանսիայի մէջ։ Եւ սորա, այս ինքն հասարակապետութեան, բարերար ազդեցութիւնը թէ ամբողջ Ֆրանսիայի և թէ Փարիզի վերայ խիստ մեծ է և պարզ նշմարելի ամենքի համար։ Այն անձինք՝ որք՝ համոզուած լինելով որ երկրի կառավարութեան լաւագոյն եղանակը է հասարակապետութիւնը, և թափելով բոլոր ջանքը այդ եղանակը հաստատելու համար՝ այժմ իւրեանց բոլոր զօրաձեռնութեան մէջ զարմանալի ազգասիրութեամբ աշխատում են արդարև ծաղկեցնել և երջանիկ կացուցանել իւրեանց սիրելի հայրենիքը և հայրենակիցները շատ դէպքերում զոհելով մինչև անգամ իւրեանց հասարակապետական համոզմունքները, ինչպէս ապացուցեց մի քանի անգամ Գամբէտտան և այլք։ Եւ փաստերը հաստատում են որ՝ այժմ Ֆրանսիան աւելի ծաղկած է և հարուստ, աւելի հանգիստ է և բախտաւոր՝ քան թէ կայսերութեան ժամանակ. բաւական է յիշել հինգ միլիարդ ֆրանկ պատերազմական տուգանքը Գերմանիային, միլիարդներին հասնող ծախքերը Փարիզում և գաւառներում բազմաթիւ հասարակական շինուածները վերանորոգելու և նոր ի նորոյ կառուցանելու համար, վաճառականութեան ծաղկիլը, գիտութիւնների մշակութիւնը, դրամական կառավարութեան բարեկարգութիւնը, ոսկու և արծաթի մեծ քանակութեան ներկայութիւնը առօրեայ առուտուրի մէջ, առաջիկայ 1878 թ. Փարիզում մտադրուած աշխարհահանդիսի պատրաստութիւնը, որից այնպէս վախեցաւ Պրուսիան որ՝ պաշտօնապէս հրաժարուեցաւ նորա մէջ մասնակցութիւն ունենալուց, վերջապէս այն քաղաքական մեծ ազդեցութիւնը, որը Ֆրանսիան սկսում է ստանալ Եւրոպայի քաղաքական գործերի մէջ։ Հասարակապետական կառավարութեան արտաքին նշանները ամենայն քայլափոխում նշմարելի են Փարիզում — եկեղեցիների ուսումնարանների, պալատների, թատրոնների հասարակական հաստատութեանց տների, հիւանդանոցների վերայ ծածանում են ազգային գրոշակները և պատերի վերայ խոշոր տառերով գրուած են երեք հասարակապետական նշանաբան խօսքերը — լիբերթէ, եգալիթէ, ֆրատերնիթէ — ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն։

* *

Ի 26 Յունվարի 1877, Ռ3ԻՉ,

Ի Փարիզ.